İST. BELEDİYE ★ İ
988
★ KÜTÜPHANESİ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԵԼԻՄԱՅ

ԿԱՄ

ԱՊՏԷՐԻ ԼԵՐԱՆՑ ՍՏՈՐՈՏԻ
ԶՈՑԳ ՄԸ ԱՆՄԵՂԱՑ ՇԻՐԻՄՔԸ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. Ե. ՄԻՆԱՍԵԱՆ

1869

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԵԼԻՍԼԷՅ

ԿԱՄ

ԱՊՏԷՐԻ ԼԵՐԱՆՑ ՍՏՈՐՈՏԻ ԶՈՑԳ ՄԸ
ԱՆՄԵՂԱՑ ՇԻՐԻՄՔԸ

988

ԱԾԽԱՑԱՍԻՐԵԱՑ

ՏԻՐԱՆ · Գ · ՓԱՓԱԶԵԱՆ

Կ · ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. Ե. ՄԻՆԱՍԵԱՆ
1869

900

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային լեզուաւ հրատարակուած ընտիր հեշ-
ջինակութիւններ և թարգմանութիւններ ըստ
բաւականի կարդալով, և անոնցմէ կարողութեան
ներածին չափ գաղափարներ հաւաքելով, բարի նա-
խանձէ մը շարժած՝ ուզեցի ներկայ գրքոյկս 'ի լոյս
ընծայելով Արդոյ Ազգայնոցս նուիրել։ Ոչ թէ գիրք
մը գրելու կարող երևնալու դիտմամբ, այլ իբրև
օրինակ Հայ մանկտւոյն, որպէս զի նոքա ալ բա-
րի նախանձաւորութենէ յորդորուած, իրենց կար-
դացած գրքերէն օգուտ քաղել սովրին։

Քանի որ իմ նպատակս իմ կրտսեր եղբարցս
բարի օրինակ մը տալ է, կը յուսամ որ բարեսէր
հասարակութիւնն ալ գործոյս թերութեանց մասին
ներողամիտ ըլլալով իր քաջալերութիւնը չի պիտի
զլանայ։

ՏԻՐԱՆ · Գ · ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԿԱԽՈՒՄՆՔ

ԿԱՄ

ԱՊՏԷՐԻ ԼԵՐԱՆՑ ՍՏՈՐՈՏԻ ՁՈՑԳՄԸ ԱՆՄԵՂԱՑ ԾԻՐԻՄՔԸ

ԳԼՈՒԽ · Ա ·

ՍԵՆՔ—ԼՈՒՍԱԼ ԱՍՊԵՏ

Այն դարերուն մէջ՝ ուր Հարուստ և աղքատ իրենց գերդաստանները թողլով, Հայրենեաց սիրով վառուած պատերազմի դաշտը անոր պաշտպանութեանը կ'երթային ։

Հայրս՝ որ Սենք—Լուալ կը կոչուէր, ասպետ մ'էր այն ատեն, և շատ պատերազմներու երթալով փառաւոր յաղթութեամբ կը վերադառնար ։

Ինչպէտ և ուրիշ ատեն Հանդարտ և վեհ ոգւոյ մը կը ծառայէր, բայց երբ պատերազմի դաշտը երթար անանկ քաջութեամբ և բազկամերկ ակռաները կրճտեցնելով կը խաղար դէպ 'ի թշնամեաց բանակը, նման այն սովալլուկ գայլին՝ որ հեռուէն երբ տեսնէ ոչխարաց հօտը, կուզէ անոնցմով իւր անյագելի քաղցը յագեցնել ։

Այս վերջի անգամն է եղեր որ Հայրս պատերազմի երթալու դիտաւորութիւն ունէր. ես, որ

մօրմէս արդէն երեք տարիի չափ կար որ որբ մնացած էի, և քանի մը ընկերներէս՝ այրենեաց համար զոհուիլը մեծ փառք մը ըլլալը իմանալուէն, ուզեցի ես ալ հօրս հետ երթալ, որ այն ատեն գըրեթէ տասն և եօթը տարեկան կայի։

Ուրջի անգամ հայրս դժկամակեցաւ իմ այս առաջարկած խնդրոյս, բայց շատ թախանձանօք աղաչեցի որ գոնէ առանց պատերազմի մտնելու հեռուէն ակնատես ըլլամ. վասն զի ընկերներէս լսած էի պատերազմի ժամանակ հօրս ըրած քաջութիւնները։ մանաւանդ ես աչօք չի տեսնելուս համար շատ կը փափաքէի։

Վերջապէս հօրս հետ գացինք պատերազմի դաշտը, և ես բլրակի մը վրայ նստած կը զննէի պատերազմը, մանաւանդ հայրս՝ որն որ սայրասուր գեղարդը ձեռքը, և նժոյգ ձիու մը վրայ նստած անանկ կը խաղար դէպ 'ի թշնամեաց բանակը և բարձրաձայն իւր զօրացը խրախոյս կարդալով զանոնք քաջութեամբ յառաջ կը մղէր, որք արիութեամբ կը պատերազմէին։

Բայց աւա՜ղ, ... ի՞նչ դժբաղդութիւն, աչքերս մթնցած բլրակէն վար կը գլորէի, երբ տեսայ իմ սիրելի հայրս ձիուն տակ մնացած էր կուրծքէն զարնուած։

Ալ այնուհետև հօրմէ մօրմէ և ամէն բանէ զուրկս մինակ մնացի երկրիս վրայ։

Ինքզինքս միշտ այսպէս կը մխիթարէի թէ՝ հայ-

բենեաց համար մեռաւ, անոր սիրոյն համար նահատակուեցաւ. և իւր անունը նահատակաց անուան դիւանին մէջ արձանագրուեցաւ։

Ինչպէս և շատ կը փափաքէի Հայրենիքս վերադառնալ հոս բարեկամացը քով, բայց անկարելի էր, վասն զի թշնամիք դէպ 'ի մեր երկիրները կարշաւէին։

Ուստի ուզեցի ճամբորդութիւն մ'ընել Ղինի կողմերը բաղդ մը ճարելու նպատակաւ, զի մօտիկ քաղաքները որ երթայի, բոլորին աւերակները կը տեսնէի, և բնակիչները մոխրոյ վրայ նստած Հայրենիք և Հայ կաղաղակէին։ Ակայ ճամբորդութեան և հասայ Հնդկաստանի աղատ երկիրներէն 'Ալեքսանդրի թագաւորութեան Բադմանդու կոչուած մայրաքաղաքը։

Այս երկրիս մէջ կենալ թէև շատ կը փափաքէի, բայց հետևեալ պատճառներով ուզեցի որ չի կենամ։

Ա. Բադմանդու քաղքին բնակիչները կը-ռապաշտ են, և կովու կամ կապիկի երկրպագութիւն կընեն։

Բ. Օդը սաստիկ տաք ըլլալուն համար բնակիչք մերկ են և իրենց մարմինները սավաններով ծածկած են։

Գ. Նրբէք հաց չեն ուտեր. և չի գիտեն ինչ ըլլալը. իրենց մշտնջենաւոր պարեն է խաշած մարախ։

Դ. Վաճառականութեան ձեռք զարկած չեն, և առուտուր չեն գիտեր, դրամը անպատիւ մետաղ մը կը համարին, և միշտ փոխանակութեամբ առուտուր կընեն:

Ե. Զարմանալին այն է, որ գոհարեղէնները և ադամանդները ոտից մատներնուն և քթերնուն վրայ կ'անցունեն:

Զ. Եթէ մէկը մեռաւ. իւր ընտանեացը մէջէն մեծին "քու մեռելդ արքայութիւն պիտի երթայ և պէտք է որ դու ալ երթաս" ըսելով, երկուքն ալ կապելով կայրեն:

Է. Ասոնցմէ աւելի զարհուրելին արջին ուրգեղջիւրին շատութիւնն է, որք իրենց չընտանեցող մարդիկը կուտեն:

Այս և ասոնց նման շատ մը պատճառներով ուզեցի որ չի կենամ: Ուստի շուտ մը ծովեզերեայ գիւղ մը իջայ որ երթամ դէպ'ի Զինաստան:

Գիւղին մէջ պանդոկ մը գտայ և գացի քիչ մը հանգչելու: Պանդոկին քովը գեղեցիկ ծաղկազարդ պարտեզ մը կար, որուն մէջ հինգ նաւաստիներ նստած կը խօսակցէին:

Ընտանեցայ անոնց հետ, և անոնց իմ Զինաստան անցնելու փափաքելս իմացուցի, որք շատ հաւանութիւն տուին և զիս իրենց նաւապետին տարին որ կարճ հասակաւ մին էր:

Նաւապետը քննեց զիս ուր տեղացի ըլլալս, ինչ պատճառաւ Հայրենիքս թողլով օտար աստ-

ղերու տակ թափառիլ ուզելս։ Ես ալ մի առ մի բոլոր գլխէս անցածները պատմեցի։

Ուստի նաւապետը քանի մը մխիթարական խօսքերով քիչ մը ժամանակ իմ թշուառիս ցաւագին սիրտը սփոփելէն վերջը, խօստացաւ ինձ տանել զիս Ղինաստան։

Նաւապետին շնորհակալ եղայ որ ինծի օգնութեան ձեռք կարկառեց։ Երկու օր սպասելէնէս վերջը ճամբայ ելանք և մեծ յաջողութեամբ հասանք Ղինաստանի մէկ նաւահանգիստը։

Դարձեալ նաւապետը զիս իւր սենեակը տարաւ և ինձ տասը ոսկի քիչ մ՚ալ ճաշ մաղախի մէջ և գաւազան մը. ու բարի օրեր մաղթելով ճամբեց։ Այս երկրիս մէջ բաղդ մը չի գտնելուս համար յոյս առաջ Աստուծոյ ետքն ալ գաւազանիս յանձնած սկսայ ճանապարհորդել։

ԳԼ. Բ.

ՊԵՏԳՈՊ

Երկու օր առանց գիւղի կամ քաղաքի հան-գիպելու շարունակ կերթայի։ Գիշերը թռչունի պէս անտառին մէջ ծառի մը վրայ կանցունէի ժամանակը։ Վայրի գազաններէն վախնալով՝ սրտիս խայթը չէր թողուր ինձ քնանալ. և միշտ ծնողաց մահը միտքս գալով, ինձ կը թուէր թէ վայրի գազաններուն ճարակ պիտի ըլլամ։

Կ'աշխատէի որ քիչ մը քնանամ, և երբ մրաքս տանէր՝ յանկարծ ծառերու խշրտոց մը լսելուս պէս վախով կարթննայի և ծառին ճիւղին կը փաթթուէի

Խսկ ցերեկներն ալ ճամբաս միշտ միօրինակ չէր տեղ տեղ նեղ և տեղ տեղ լայն, ասդիս անդին հին ու մեծ ծառեր բարձրացած, որոնք կարծես թէ կսպառնային իրենց տակը ճզմել անկէ անցնող ճամբորդները։

Երրորդ օրը երբ մաղախը ուսս և գաւազան ի ձեռին կը շարունակէի ճամբորդութիւնս յանկարծ ինքզինքս գեղեցիկ հովտի մը մէջ տեսայ, ուր շինական երկրագործ մը կաշխատէր։

Ասոտեցայ անոր քովը, և խոնարհութեամբ բա-

ընելէս վերջը, քիչ մը նստայ հոն ուր տեղի դիրքը շատ գեղեցիկ էր։

Հովտին շուրջը ակասիա և օպեփին ծառերով ցանկապատ էին. որոնց ճիւղերուն վրայ խումբ խումբ թռչնոց բազմութիւններ կերդէին և իբր թէ ողջունէին այս գեղեցիկ հովտս։

—Արցուցի երկրագործին թէ հոս մօտ տեղս գիւղ կամ քաղաք չիկա՞յ։

—Ը.հա՛ ասկէ քիչ մը հեռու գիւղ մը կայ. հոն երբոր մտնես՝ աջ կողմդ աղբիւրի մը քով պանդոկ մը կայ. զորն որ ճամբորդներու համար շինուած է։

Ուստի ինձ ցոյց տուաւ գեղեցիկ և կարճ ճամբայ մը և շնորհակալութեամբ սկսայ քայլերս կըրկնապատկել։

Ճամբուն վրայ տեսայ շինական կանայք. որոնք սափորնին ուսերնին ջուր բերել կերթային։

Երջապէս մտայ գիւղը և գացի պանդոկը։

Պանդոկապետը հոն չի գտնելուս համար բացի պատուհանը և պանդոկապետը կանչեցի. բայց և ոչ թէ ուրիշ ձայն մը լսեցի բաց՝ի արձագանքէս։

Դանի մը վայրկեան հոն սպասելէս վերջը, պանդոկապետը եկաւ և ձեռքը հողէ աման մը որուն մէջ կաթ էր կթած։

Դրեթէ կես ժամու չափ իմ ով ըլլալս պանդոկապետին իմացուցի. նա ալ ևս ինձ իրեն ինչ աստիճանի թշուառ ըլլալը պատմեց այսպէս։

« Ես կողովագործ մ՝էի ժամանակաւ և կողով

շինելով կը տանէի Զինաստանի մայրաքաղաք Պեքին, ուր շատ կը ծախուէր։

Կին մը և երեք զաւակ ունէի։ Բայց երեք տարի առաջ երբ Պեքին ինձ ծած էի կողով ծախելու, և յաջողութեամբ ծախելէս վերջը իմ տղոցս համար իրենց տղայական բաղձանքներն ալ մասամբ իւիք յագեցնելու ջանացի, և դարձայ իմ գիւղս։

Բայց աւաղ. անդրանիկ և կրտսեր որդեակներս գտայ մահուան ճիրաններուն մէջ Ծաղիկ ըսուած հիւանդութենէն, և ինձ միմիայն ձգեր էր Ամենակալն Աստուած միջին որդիս որն որ ինը տարեկան էր։

Ալ այնուհետև սկսայ իմ գրուիս և խնամքս այս որդւոյս վրայ թափել իմ վերջին. որն որ միայն կարող էր իմ վշտացեալ սրտիս մէջ ուրախութեան նշոյլ մը արձակել, և տխուր ու տժգոյն մեր դիմացը վրայ երբեմն երբեմն յուսոյ և բերկրութեան ժպիտ մը ցուցնել. և որն որ մեր վերջին տարիներուն միակ ապաւէն և մխիթարիչը պիտի ըլլար։

Ան ալ հաղիւ մեծցաւ և մէկ երկու տարիէ 'ի վեր սկսած էր կողովագործութիւն ընել մեր տխուր օրերուն բեռը թեթևցնելու և մեր կենաց պիտոյքները բաւական դիւրութեամբ հոգալու. (Դանդի ալ ես կարողութիւն չունէի աշխատելու),

Բայց ահա անգութ մահը իւր ծաղիկ հասակին մէջ զայն մահուան և զմեզ վշտաց և սգոյ անդունդը գլորեց, և մեր վշտացեալ սրտին աւելի ևս դա-

ռըն հարուած մը տալով, և մեր յուսոյ յենարանը խորտակելով:

Եւ ես նմանեցայ այն շուառ ճանապարհորդին որն որ տարժանելի նեղութեամբ դժուարին անապատներէ անցնելէ, խոչնդոտներու յաղթելէ, փոսերու վրայէ ցատկելէն սրունքները արիւնոտելէն վերջը. հեռուէն իւր սիրելի Գիւղակը և ծննդեան տեղերը տեսնելով ուրախութեամբ լի, ինք զինքը միայն ձեռքի գաւազանին յանձնած քիչ ատենէն կյուսայ հոն հասնիլ. ահա՛ գաւազանը կկոտրի և ինքը վաստակաբեկ և նուաղեալ կիյնայ յուսահատ ճամբուն վրայ:

Ո՞վ ճանապարհորդ երբեք տարիէ՛ի վեր այս տեղ Պանդոկապետ մ՚եմ, և իմ ծերունի կինս ալ կը տաւ կը գործէ որոնցմով հագիւ մեր օրական պարեններս կը հայթայթենք:

Յանի մը մխիթարական խօսքերով Պանդոկապետին վշտացեալ սիրտը սփոփելէս վերջը, ձեռքը աչուքները սրբեց, և գնաց ինձ բերաւ մոխրոյ մէջ եփած հաց, քիչ մը կարագ, զորոնք ախորժանօք կերայ:

— Հարցուցի Պանդոկապետին թէ, "այս գիւղին անունը ի՞նչ է":

—Այս գիւղին անունն է Ասրոյ, որուն հիւսիսային կողմէն Աղալեան գետը կանցնի, որն որ արևուն ճառագայթներէն շառագունած և լուսնոյ արծաթագոյն լուսովը փայլելով լեռներէն կը սողսկի:

Դուն որ այսչափ տեղ ճանապարհորդած մինչև հոս եկեր ես, խնդիր մը առաջարկեմ քեզի թէ որ կը կամենաս։ Ասկէց մինչև գետին եղերքը գնա. որուն դիմացը կը տեսնուի Աղուէջի Լեռները։

Այս լերանց ստորոտը. երկու դրացիներու հիւղերը կը գտնուէր ժամանակաւ. բայց հիմայ մին աւերակ է դարձած. անոնց պատմութիւնը շատ սրտաճմլիկ է. գնա՛ հոն գտնուած թշուառ ծերունիէն կրնաս ունկնդիր ըլլալ։

Պանդոկապետին շնորհակալ եղայ և ոսկի մը տուի, և սկսայ ճանապարհորդել։

Ամբուն շքեղութիւնը չեմ կրնար լեզուաւ պատմել. Ադալեան գետը տեղ տեղ բաժնուած և տեղ տեղ գտնուած ջաղացքներուն անիւները կը դառնային ջրերուն զօրութեամբը։

Շինական արք և կանայք արտերէն կը դառնային. որոնց առջևէն կովերու և ոչխարաց երամակները խայտալով կը ճարակէին. խել մը այծեր ալ ժայռերուն վրայ կը ցատկռտէին.

Արդէն արևը իւր մարը մտնելու վրայ. և իւր ոսկեթել և լուսաճաճանչ ճառագայթներուն շառաւիղները լեռներու գագաթները, դաշտերը և մարգագետինները կը շառագունէին, որոնց հետ իրիկուան զով զեփիւռ մը կը փչէր, և կապուտ ճերմակ մանր ծաղիկներուն թերթերէն անոյշ հոտ մը կը բուրէր։

Քիչ մ՚աշ գացի և հասայ գետը, որուն խոխոչանաց ձայնը մարդուս ականջները կը խլացուներին և որուն եզերքը շինական կանայք սափորներին կը լեցուներին :

Հանեցի գաւաթը մաղախէն և քիչ մը ջուր խըմեցի որով քիչ մը զովացայ :

ԳԼ. Գ*.

ԾԵՐՈՒՆԻ ՄԸ

Անդոկապետին յորդորանօքը որոշեցի այցելութեան երթալ Ս.դալեան գետին հիւսիսային կողմը գտնուած լերանց ստորոտի երկու թշուառ դրացեաց հիւղերուն : Ուստի սկսայ այն լեռնէն վեր ելլալ որ կը կոչուէր Ապրէր :

Լերան գագաթին վրայ տեսայ շինական փայտահար մը որն որ կացինը ուսը և փայտերու խուրձ մը կռնակը կերթար :

—Հարցուցի իրեն թէ, "կրնա՞ք ցուցնել ինձ երկու դրացիներուն հիւղերը" :

—Ս.հա՛, պատասխանեց շինականը. այս լերանց ստորոտն է :

Ուստի սկսայ լեռնէն վար իջնալ, և տեսայ

* Այս գլուխին կոկոխ բուռն մը պատմութիւնը :

առուակ մը որն որ կաղնիներուն և թաւշենիներուն խոռոչներէն անցնելով լճի մը մէջ կը թափէր։

Երդէն արևը իւր մարը մտած էր, հետևաբար քայլերս կրկնապատկել հարկ էր ինձ, որպես զի լերան վրայ գիշերն անցնելու դժբաղդութիւնը չունենամ։

Այսպէս հասայ լերան ստորոտը որն որ բարեբեր դաշտերով, հովիտներով, և մարգագետիններով ծածկուած էր։

Երբոր բնութեան գեղեցկութեանը վրայ զմայլելով կը զննէի. տեսայ ծերունի մը որ փսիաթէ գըլխարկով և ձեռքը կողով մը բռնած ծաղիկ կը ժողուէր, և երբեմն զուարճութեամբ ծաղիկները կը սփռէր ուրիշ կողովի մը մէջ որն որ լճին ալիքներուն վրայ կը ծփար։ Իւր ճակտին վրայ նկարուած էր տխրութիւն մը, և որուն դեմքին վրայ տրտմութեան և թշուառութեան նշանները կը տեսնուէր։

Ո՞ւտեցայ քովը և յարգաւոք ողջունեցի զանի որն որ սիրով պատասխանեց իմ ողջունիս։

Իմ զգուշաւոր դիրքս ու վար նայող աչքերս իրմէն ներում կը խնդրեին զինքը ակամայ այսպէս շփոթելուս համար։ Մեթեւիկ կարմրութիւն մը իրեն դեղնած այտերը գունաւորեց։

Դարձայ խնդրեցի՝ թէ ճամբորդ մը ըլլալով հեռաւոր երկիրներէ եկած, այս գիշերուան համար ապաստանարան մը կը բարեհաճի՞ք շնորհել։

Ծարի ծերունին յօժարութեամբ ընդունեց իմ խնդիրս, և մաղախս գետինը դնելով քիչ մը նստանք

մարգագետնին վրայ ծառի մը ներքև։ Դիւրախօսակցութենէ մը ետքը հարցուցի՝ «Թէ ինչ՞ու այս ծաղիկները կը հաւաքէք»։ Ան առանց իմ հարցմանը պատասխանելու հեռուեալը մռմրաց քթին տակէն։

Ո՞րչափ թշուառ է այն Հայրը,
Որ խոր ծերութեան ատենը.
Իւր ձեռքը կ՚դնէ հողը,
Օ՜ոյգ մը սիրելի զաւակունքը։

—Ո՛հ Հայր իմ, կրկնեցի զգածեալ ձայնով մը. քու այդ ըսածէդ և դիմացդ վրայի տխրութեան նշաններէն յայտնի կը տեսնուի թէ՝ ինձ պէս գլխուդ շատ դեպքեր պատահած են։ Եւ սկսայ համառօտաբար պատմել գլխէս անցածները։

Դաջաբաղուկ Ասպետ հօրս պատերազմի ժամանակ աչացս առջև կորսնցուներլս։ Տղայութեանը գլոց պերճութեամբ մշակուած չքնաղ դիւրազգածութեան տէր մայրս, զոր ն որ պատանեկութեանս ժամանակ կորսնցուներլու դժբաղդութիւնը ունեցած էի։ Վերջապէս տասն և ինը տարեկան եղած հասակիս մէջ Հայրենիքէս և ամեն բանէ զրկուած թշուառս օտար աստղերու տակ անդաստական թափառիլս. Եջ Եջ։

Դարի ծերունին քիչ մը ժամանակ լռութիւն մը պահելէն վերջը, «Ո՞վ երիտասարդ ճանապարհորդ իմ ըսելիքս երկայն և շատ սրտաճմլիկ է։ Հիմա, երթանք մեր խրճիթը, ուր պիտի տեսնես իմ հիւանդ կողակիցս որ երեք տարիէ 'ի վեր անկողնոյ մէջ

կը տառապի. պիտի տեսնես իմ հաւատարիմ դը-
ըացիս որ Հիւանդին ամեն պիտոյքը կը հոգայ ,, :

Ասոյ ըսաւ, և հեռացաւ ինձմէ քանի մը վայր-
կեան, և յետոյ վերադառնալով ըսաւ. ,, երթանք
բարեկամդ իմ մեր խրճիթը քիչ մը ընթրել, և այ-
նուհետև քեզի պատմեմ մեր և որդւոցս կենաց
պատմութիւնը ,, : Ծերունւոյն հետը ծառա-
զարդ նեղ ճեմելիք մը մտնելով ուրկէ խրճիթը կեր-
թուէր :

Ծառի մը տակ գերեզման մը նշմարեցի
զոր ծերունւոյն հաւաքած ծաղիկներովը ծածկուած
էր. և որուն վրայ այսպէս էր գրուած :

ՇԻՐԻՄՔ
ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՍԵԼԻՄԱՑԻ
ՋՈՑԳ ՄԸ ԱՆՄԵՂԱՑ

Օղոյգ մը անմեղ Սիրահարաց,
Սկերբ 'ի շիրիմն ամփոփուած.
Որք յաշխարհիս միմեանց զՍէր,
Ո՛չ այլևս չի կարողացած։

Ո՛հ, վարդի մը պէս ծլեցան,
Սակայն շուտով թառամեցան.
Չի խնդրեցին ուրիշ բան մը.
Այլ ծաղկաք ծածկել Դերեզմանը։

Բանի մը վայրկեան ես և ծերունին մերդեմ-քերը արտասուաց աղի կաթիլներովը թրջելնէս վերջը մեկտեղ գացինք խրճիթը որ լերան ստորոտի մեկ կողմը շինուած էր։

Յիրաւի գեղջկական երևոյթ մ'ունէր այն, ուրկէ ներս մտնելով տեսայ ծերունի կին մը որ յարդէ շինուած անկողնոյ մը մէջ կը տառապէր. և որուն աջ կող մը հիւանդապահ կինը նստած զգուշութեամբ կը հսկէր հիւանդին վրայ։

Հիւանդին վիճակը դիտելով կը տեսնէի թէ աչունները դեղնցած խոր սրտէն կը հառաչէր իբր թէ օգնութիւն կը խնդրէր ինձմէ։

Այս տեսարանիս վրայ սիրտս շարժեցաւ, փափաքեցայ որ գէթ ես ալ ծառայութիւն մը ընեմ։

Ընդէն պանդխտութեանս կը ճանչնայի խել մը բոյսեր, որոնք Հիւանդի դայման կրնան ըլլալ։ Ուստի խրճթէն դուրս ելայ փափաքած բոյսերս գտայ, անոնցմով տեսակ մը դեղ շինեցի որ բաւական օգնեց Հիւանդին։ ԵՒ որուն դեղնած այտերուն վրայ ուրախութեան ժպիտ մը նշմարեցի։

Վերջապէս բարի ծերունին քովի առանձնատեղին զիս տարաւ, ուր կարագ և Հաց պատրաստած էր, զորոնք ընթրեցինք։

Բաւական ժամանակ Հոն կեցնալով խօսակցելնէս յետոյ, խրճթէն դուրս ելանք մարգագետնին վրայ նստանք։

Օդը պարզ էր, Երկինքը կապոյտ բազմաթիւ աստղերով զարդարուած։ Լուսինը սպիտակ ամպի մը մէջէն կ'ելլէր, ու խաղաղ սահելով օդին մէջէն գիշերային մթութիւնը կը փարատէր։

Բալցը զեփիւռ մը երերուն մայրենիներուն մէջէն փչելով կը զովացնէր մարմինները, և ծաղիկներուն կոկոններէն անոյշ Հոտ մը կը բուրէր։

Խրճթէն քիչ մը Հեռու առուակ մը իւր խոխոչանաց ձայնովը արձագանք կուտար անտառներուն, որ կուգար կը միանար լճակին մէջ որուն ալիքները լուսոյ արծաթագոյն լուսովը կը փայլէին։

Մէջ մը ժամանակ Բարի ծերունին ձեռքը ճակտին վրայ դրած մտածելէն վերջը, սկսաւ այրած սրտով, յաւագին ձայնով, և արտասուաթոր

աչուններով հետևեալ սրտաշարժ պատմութիւնը ինձ պատմել։

Ես ծնած եմ Ֆիզանտանի և Հնդկաստանի շրջակայ գիւղերէն մեկուն մէջ որ կը կոչուէր ՄԵՆՈՒ և որն որ շատ բարեբեր գիւղիկ մ'էր։

Այս գիւղիս դիրքը շատ շքեղ է. ձմեռուան սաստկաշունչ քամիները հոն բնաւ չեն շնչեր, ամառուան ջերմութիւնը զովաշունչ զեփիւռներու քաղցրութեամբը բարեխառնուած է։

Գիւղին բոլոր բնակիչները կտաւագործ են. և ամառը կտաւ գործելով աշնան ատեններս Կալկաթայ կիջնան ծախել փոխարինութեամբ։

Իսկ ես երբ տասն և չորս տարեկան եղայ հայրս կորսնցունելու դժբաղդութիւնը ունենալովս ստիպուեցայ բազուկներուս աշխատութեամբը մեր օրական պարեննիս ճարել այն աշնան ատեններս Կալկաթայ իջնալ կտաւ ծախելով։

Ամբորդութիւննիս Սեպտեմբեր ամսուն գեղեցիկ գիշեր մ'էր. գիշերուան գաղջ զեփիւռը գեղեցիկ զովութիւն մը կը բերէր. սկսեր էր աշնան տերևաթափը և այգեկութքը,

Հինականք ամեն կողմէն կերթային այգինին ժողուելու անուշահոտ ողկոյզները.

Մենք ալ ճանապարհորդակիցքս այգիներուն մէջէն անցնելով ցնծութեամբ լեցուած շուտով

հասանք Կալկաթայ Հնդկաստանի գլխաւոր քաղաք։

Նախ այս քաղաքիս կլիման սաստիկ տաք ըլլալուն, երկրորդ զանազան և մեծ պատճառներով* երկարատև հիւանդութեան մը ենթակայ եղայ.

Մինչ մահճոյս մէջ կերազէի Մայրս և ազգականներս, ու վերմակը և սաւանը իմ արտսուքովս կը թրջէի, որոնք գեռի նման կը հոսէին աչերէս։

Ահա՛ այսպէս երբ կը տառապէի մահճոյս մէջ, օր մ'ալ յանկարծ ընկերներս բերին ինձ Անգղիացի բժիշկ մը, որն որ ուշադրութեամբ զննեց զիս. և զմեզ ապահովցուց թէ՝ քիչ ժամանակէն կրնամ առողջանալ։

Բժիշկը երբ մերժուեցաւ ինձմէ, աշխատեցայ որ քիչ մը քնանամ սոյն ուրախութեամբ։

Պունիս մէջ երազ մը տեսայ։ Ինձ կը թուէր թէ՝ խոչնդոտներով պատած փոսի մը մէջ ինկած էի մահիճս կռնակս բեռնաւորուած. նման այն փայտահարին, որն որ փայտերու խուրձով մը բեռնաւորուած կը վերադառնայ անտառէն իւր ագարակը։

Այս փոսիս մէկ կողմնալ գեղեցիկ ծաղկազարդ հովիտ մը կար, ուր նաև գտնուած բլրակին հանէն արևը իբրև անդունդի մը մէջ կը գահավիժէր, և բլրակին ստորոտը հայելւոյ պէս փայլող աւազանին

---

*Տես Պոպոմանեան 3 երես։

քով իմ եղբօր որդիս նստած, և հաւաքած ծաղիկները աւազանին մէջ կը սփռէր: Կը ճգնէի զանի կանչել, բայց կարծես թէ մէկը ձեռ կ'սպառնար վրաս չի խօսելու համար: Ազիւ խոշնդոտները մագլեցով փոսէն վեր կելլէի և կը մօտենայի հովտին, մէկէն խորխորատը կը գլորուէի:

Երբ այսպէս կերազէի, յանկարծ շշնկոցէ մը վախով արթնցայ քրտանց Ովկիանոսին մէջ. և սրտիս խայթը միշտ կը նեղէր զիս տեսած երազս յիշեցնելով:

Արշալոյսը ծագելու մօտ էր. սկսեր էին աքաղաղները երգելու ձայները լսուիլ, որոնք կ'ողջունեն արշալոյսը և ամէն մարդու կիմացնեն աշխատութեան սկսիլ, թողլով քնոյ քաղցրութիւնը որ կը վայելեն գիշերուան մութին մէջ.

Ներէն մրաբս տարեր էր. և այն փոսին մէջ երբ կը նեղուէի, մէյ մ'ալ յանկարծ ճերմակ հագուստով ծերունի մը եկաւ ձեռքէս բռնեց և տարաւ հովտին մէջ ուր եղբօրորդւոյս գիրկը նետուեցայ և սիրոյ համբոյրնիս իրարու տալէ վերջը արթնցայ:

Պատուհանը բացի և մտիկ կընէի թռչնոց դայլայլիկները որոնք քաղքի ներդաշնակութիւններ կը յօրինէին մաքուր օդոյն մէջ:

Փոքրիկ թռչնիկ մ'ալ պատուհանիս դիմացը կեցած միշտ կը գեղգեղէր, կարծես թէ բարի լուր մը ունէր ինձ աւետելու:

Աստուծոյ աղէկ մը ծագեցաւ, և իմ ճանապարհորդակիցներէս մին եկաւ իմ ինչ վիճակի մէջ ըլլալս իմանալու. և պատուհանին քով նստած իմ տեսած երազիս վերայօք կը խօսակցէինք:

Յանկարծ սենեկիս դուռը բացուեցաւ, և օտարական ճամբորդ մը եկաւ գրպանէն նամակ մը հանեց ինձ տուաւ և հեռացաւ ինձմէ:

Բացի նամակը և տեսայ վարդի փունջէ պատկեր մը նկարուած, և որուն մէջ իմ Եղբօրորդիս Փառնակ գրած էր մօրս հիւանդութիւնը իմ անկէ բաժնուած ատենս, և հիմա ալ քաջառողջ վիճակի մը մէջ ըլլալը ևն ևն:

Հատուրախացայ այս նամակիս վրայ, և միշտ իմ արտասուքներս անով կը ցամքեցնէի. ու կը կարծէի թէ Մօրս գիրկն եմ. և որով առողջացայ:

Դիւղացի ընկերներս գացին. իսկ ես որ հազիւ օրական պարէնս հայթայթելու չափ ժամանակ ունենալուս ստիպուեցայ զինուորութեան գրուիլ, և իմ գործքերովս Ասպետ մ'եղայ:

Իմ սրտովս կրցայ քանի մը ազնիւ մարդոց հետ բարեկամանալ. որոնց միջնորդութեամբը ամուսնացայ աղքատիկ գերդաստանէ Յուլիանէ անուամբ աղջկանը հետ, (և որն որ հիմա հիւանդ է:)

Դրեթէ ամսուան մը ամուսնացած էի, մեծ խռովութիւն մը ծագեցաւ Հնդկաստանի և Աֆղանստանի մէջ այսպէս:

ԳԼ. Դ.

ՊԱՏԿԵՐԱՑԱՐ

ԵՒ

ԲԱԺԱՆՈՒՄՆ

Դմեռուան տխուր գիշեր մը խորին լռութիւն մը տիրած էր բոլոր Հնդկաստան*. միայն թէ ժամանակ առ ժամանակ փչած բքաբեր քամիները կը վրդովէին այս լռութիւնը:

Ինակիշները իրենց դռները ամուր գոցած ոմանք չէին կրնար քնոյ բաղցրութիւնը վայելել, երբ իրենց ապագայ վիճակը կը մտածէին:

Այլք վառարաններուն քով կծկուած ահու դողի մէջ ինկած՝ ապագայն կը մտածէին ներկային հետ բաղդատելով. վասն զի գիտէին թէ Ափղանիստանցիք իրենց վրայ պատերազմ բանալ կուզին:

Այրդէն պարիսպներուն դռները գոցուած և բանալիները արքայական պալատը խրկուած էր:

Ներդապահները բերդերուն վրայ և գիշերապահները փողոցները ժուռ կուգային բնակչաց պահպանութեանը համար:

*Ձմեռը ցուրտը Հնդիւսպանի մէջ սովորաբար գէշերը կըլլայ:

Ես որ Վ՚ալտ—Պէրժան ասպէտ անունով Ընդկաստանցւոց բանակաց գլուխ կարգուած և պատերազմներու ատեն սայրասուր գեղարդովս շատ քաջութիւններով մեծամեծ յաղթութիւններ ստացած էի. փոքրիկ բնակարան մը ունէի, հոն վերնայարկի փոքրիկ սենեակին մէկ անկիւնը քաշուած արքունի հրամանագիր մը կը կարդայի այս տխուր գիշերս: Իսկ կողակիցս Յուլիանէ վառարանին քովն էր նստած։

Տանս դուրսի տեսքը այնչափ շքեղ չէր որչափ որ ներսը. բոլոր պատերը մամռով էին պատած, որոնց վրայ քաղաքներու և հոյակապ շէնքերու պատկերները կը գտնուէր: Փոքրիկ վին մը որով կը զուարճանայինք:

Ի՞նչ լուր ունիք, ըսաւ Յուլիանէ ժպտելով մը ինձ։

—Ոչինչ, պատասխանեցի. սակայն դէմքիս վրայ տիրած էր անձկութիւն մը: Ամուսինս գոհ չըլլալով իմ պատասխանիս ստիպեց զիս ճշմարտութիւնը խոստովանելու:

—Մինչև ցարդ սիրելիդ իմ ըսի, ուզեցի ձեզմէ ծածկել այն մօտալուտ աղէտը, որ թերևս....։

—Ի՞նչ, նոր աղետ մը կը պատմէք. ո՛հ, կաղաչեմ ըսէք ինձ, ընդմիջեց ամուսինս։

—Վ՚երջապէս ստիպուած եմ ամէն բան յայտնել. Ընֆղանստանցիք ստուար բանակաւ մեր Հայաբնեաց վրայ պիտի յարձակին, արդէն Հնդկաստանի

սահմանագլուխը հասած են : Լսած ես անշուշտ այս ազգին քաջութիւնը և գործքերը . ուստի աւելորդ է երկարել : Այսչափ միայն կըսեմ որ սահմանագլուխն անցած են :

—Ուրեմն դուք ալ պատերազմի պիտի երթաք :

—Այսպէս կը հրամայէ ինձ հայրենիք , պէտք է անոր հրամանին անսալ :

Այս միջոցին դուռը զարնուեցաւ , և քաղաքին բերդապահ դռնապանը սենեակս մտաւ ձեռքը աղօտ լուսով փոքրիկ լապտեր մը բռնած և ըսաւ

Տէր իմ ահա ժամ մը կայ որ Աֆղանստանցիք Հիմալայա լերանց ստորոտն հասան :

—Ո՞վ ձեզի բերաւ այդ լուրը :

—Բերդապահ ընկերներնէս մին տեսեր էր թշնամին և մեզ իմացուց :

Դռնապանը ելաւ գնաց և ես ամուսնոյս հետ դարձեալ մինակ մնացի : Ալ հարկ էր ինձ անմիջապէս զօրացս հետ վրանաբնակ անցնել գիշերը հետևեալ օրուան համար :

Ուստի վեր կացայ առի և պատրաստուեցայ դուրս ելլալ բայց Յուլիանէի հետ հրաժեշտի վայրկեանները շատ սրտաշարժ էին :

Անբարբառ գրկախառնեալ չէինք կրնար իրարմէ զատուիլ . և մեր երկուքնուս դեմքերը յորդահոս արցունքներով կը թրջուէին :

Վերջապէս հեծեծանքը բռնելով , — գնա՛ ըսաւ ինձ , Վա՜ալտ—Պէրժանդ իմ , հայրենեաց հա-

մար պատերազմելու, այս վիճակը քեզի սահման-ուած է, Ստուծոյ կամացը պէտք է Ինազանդին քի Ստուած քու քաջերուդ առաջնորդէ, ըսաւ, և դարձեալ ուժով մը սրտին վրայ զիս կը սեղմէր:

Քանի մը վայրկեան այսպէս անցնելնէն վերջը — մնաս բարեաւ սիրելիդիմ, գոչեցի հատկտեալ ձայնով մը, մնաս բարեաւ, ես Հայրենեաց պաշտպանութեան կերթամ, Ստուած ալ զքեզ պաշտպանէ, երկու կողմանէ փոխադարձ զիրար չի մոռնանք. այս ըսի և բաժնուեցայ սպառազինեալ, ու գացի Իմալայա Լերանց ստորոտի դաշտը ուր որ բոլոր բանակը գումարուած էր Թշնամւոյն դէմ:

Ընդհակը նոր սկսեր էր հորիզոնը բարձրանալ. երկու բանակները ճակատ առ ճակատ պատրաստուած յարձակման նշանին կսպասէին:

Պատերազմը չսկսած բանակին դիրքը դիտեցի, պտտեցայ զօրացս մէջ և հայրենասիրական խօսքերով խրախուսեցի արիութեամբ մարտնչիլ և արիւն թափել Հայրենեաց համար:

Քաջ զօրականքդ իմ, քանի մը անգամ ձեզի հետ Թշնամւոյն դէմ մարտ մղելու բաղդը ունեցայ և ամէն անգամուն ձեր արիութեամբը յաղթութեան փառքը ստացանք: Այս յաղթանակաց պատճառաւ մեր մարմնոցը վրայ սպիներ կը կրենք, զանոնք Հայրենեաց համար ընդունած ենք, զորոնք մինչև գերեզման պիտի կրենք:

Այս անգամ ալ զօրականքդ իմ, կը մնայ մեզ

նոյն վտանգը ստանալ :

Երբէք չի վախնանք թշնամեաց բազմութենէն, և անոնց ահագին սուրերէն : Այո՛, թշնամին ահաւոր է այլ անոնց յաղթելը դժուարին չէ եթէ արիութեամբ մարտնչինք 'ի սէր Հայրենեաց, զոր ոտնակոխ ընելու կըսպառնայ թշնամին :

Եթէ որ յաղթութիւնը մեր ձեռքը հասնի, դիւաղաւալ կը տապալենք գետին զանոնք, որով ճըշմարտութեան կողմը կբարձրանայ : Իսկ թէ որ պիտի մեռնինք, այս պատերազմիս մէջ խնդութեամբ ընդունինք այն մահը, քան թէ վատութեամբ փախչիլը,

Հապա զօրականք, թշնամեաց զօրութենէն, թշնամեաց բազմութենէն չի վախնանք, թափենք արիւններս, և երբէք քաջութեան հետ վատութիւն չի խառնենք :

Եմ խօսքերս բոլոր զօրաց սիրտը վառեցին, որոնք թէև քիչուորը, բայց ստուար բանակներու դէմ գնել կը խոստանային :

Յարձակման նշանը տրուեցաւ. երկու բանակները խառնուեցան իրարու նիզակ 'ի ձեռին։

Իսկզբան բանակին աջ թևը, որուն ես կը հրամայէի, ուժգնութեամբ կռուեցաւ. այլ թըշնամեաց ստուար բանակին չի կրցաւ դիմանալ. և ցրուելու վրայ էր, երբ ձախ թևին զօրապետը ինձ օգնութեան հասնելով վանեց թշնամին մեծամեծ քաջութիւններ ընելով : Սակայն այն յաջողութիւնը չի կրցանք ունենալ մինչև վերջը, վասն զի երբ

բանակին ձախ թևին՝ որ ընկճելու վրայ էր, օգ-
նութեան վազեց, հոն մահացու հարուած մը ընդ-
դունեց թշնամի զօրքերէն և թաղուեցաւ դիակաց
տակ։

Այս քաջ զօրապետին անկումը վհատեցուց
բոլոր բանակը, որ փախչելու ստիպուեցաւ։

Ի՞նչու՞ր կը ձայնէի զօրաց պատերազմիլ արի-
ութեամբ։ Այս անգամ լսելի չեղան խօսքերս։

Հասկցայ որ յաղթանակեց թշնամին, կմնար ին-
ձ՝ ահա կամ գերի ելլալ թշնամւոյն և չարաչար մահ-
ուամբ կեանքէ զրկուիլ, և կամ փախչիլ։

Խոհեմութիւն էր փախչիլ հեռանալ, ուստի
զգեստներս փոխելով, ինկայ լեռնէ լեռ անտառէ
անտառ, որպէսզի թշնամւոյն բանակէն հեռանամ,
և իրօքաւ երկար ատեն քալեցի։

Սակայն ինկայ այնպիսի անտառներու մէջ
ուր ոչ ճամբորդի մը ոտքերու հետքը կը տեսնուէր։

Հազիւ մեծ դժուարութեամբ կրնայի թանձր
թուփերէն անցնիլ, երբեմն երբեմն առուներու հան-
դիպելով։ Որչափ յառաջ կերթայի թփերն այնչափ
աւելի կը խտանային. անանկ որ լերան գագաթնե-
րը բոլորովին տեսութենէ կորսնցուցի։

Ո՛հ. կըսէի հառաչելով, գիշերս այս սոսկալի
անտառին մէջ վայրի կենդանեաց հետ պիտի ան-
ցունեմ. ո՞վ գիտէ թերևս կերթակուր ելլամ անոնց։

Երբ այս մտածմունքներով ճամբաս կը շարու-
կէի, յանկարծ առջևս զառիվայր ուղի մը տեսայ

որ բազմատեսակ ծաղիկներով զարդարուած դաշտ մը կը հանէր։ Այս դաշտին մէջ ոչխարները իրենց խնամտոտ հովուին քով խայտալով կը ճարակէին։

Գացի հովուին մօտ յարգանօք ողջունեցի զանի երկրին սովորութեանը համեմատ, խընդրելով որ ապաստանարան մը շնորհէ թշուառի մը, որ ատեն էր կը թափառի օտար երկրի մէջ հաց ճարելու համար։ Սակայն չուզեցի երբէք իմ ովը ըլլալս, և ոչ իսկ թափառական շրջելուս ճշմարիտ պատճառը յայտնել։

Հովիւը խղճալով հիւրընկալեց զիս, և նորոյ ըռուած գիւղը բերաւ, որն որ ասկէց քիչ շատ հեռի է։ Հիւրընկալիս յորդորանօքը որոշեցի հովիւ ըլլալ և ժամանակ մը հովուական կենաց քաղցրութիւնը վայելելով մխիթարուիլ։ և այս կերպով ամէն օր կը տանէի հօտը դաշտը արածելու համար։

Մինչև այն ատեն ամենևին իմ կնոջս վրայօք լուր մը առած չէի, և չէի գիտեր թէ ո՞ւր է գացեր։

ԳԼ. Ե.

ԾԵՐՈՒՆՈՑՆ ԱՄՈՒՍԻՆԸ

Աշնան գեղեցիկ եղանակը մօտեցեր էր։ Այս եղանակիս մէջ եղեամէ զարնուած և քիչ մը ատեն կարմիր գոյն առած տերևները կսկսէին վար թափիլ ծառերէն. բայց մարդագետինները ու խոտերը աշնան անձրևներէն կենդանացած կը ծլէին գարնան պէս։

Ընկերս որն որ ալ ծերացած էր, չէր կարող հովուութեան պաշտօնը վարել, ուստի մեր տիրոջ կամքը հայրենիք գնաց, և հօտը արածելու հոգը բոլորովին իմ վրաս մնաց։

Ամէն ատեն ինչպէս որ ամէն տեղ սովորութիւն է թէ առաւօտուն և թէ իրիկունները ոչխարները գոմէն դուրս հանուած և ներս մտցուած ժամանակներին՝ կը հաւրուի։

Իրիկուն մը երբ ոչխարները գոմ կը մտցուներինք, ոչխարաց տէրը որ նոր հովուի մը հետ եկած էր կենդանիները աչքէ անցնելու, ոչխար մը պակաս գտնելով սաստիկ յանդիմանեց զիս իմ անհոգութեանս համար, և պատուիրեց որ ոչխարը գտնեմ. և հօտին պահպանութիւնն ալ նոր հովուին յանձնեց։

Ընազանդեցայ տիրոջս հրամանին և անմիջապէս սկսայ փնտռել կորուսած ոչխարը, այլ փուռը գացին բոլոր աշխատութիւնս։ Ոչն գիշերը դարձայ խրճիթս բայց չկրցայ քնանալ։

Առաւօտուն կանուխ արթնցած փութացի փընտրռել ոչխարը։ խել մը ատեն թափառեցայ, և ցորեկ ատեն բլրի մը գագաթէն յանկարծ ոչխարի մայելու ձայն մը լսեցի, օ՜հ, ըսի ինքնիրենս ուրախութեամբ, գտայ կորուսեալ ոչխարս, ինչ բերկրութիւն երբ զանի գրկեմ, ու սկսայ ակճորովս զանի կանչել, ճամբուն վրայ առուակի մը հանդիպեցայ որն որ կաղնիներուն և թաւշենիներուն խոռոչներէն անցնելով լճի մը մէջ կը թափէր։

Բայց որչափ մեծ եղաւ զարմանքս, երբոր մարգագետնին մէջ տեսայ կին մը որն որ ծառի մը կոճղին կրթնած գետնախնձոր կուտէր, և ոչխար մը գրկած՝ գետնախնձորին կեղևները անոր կուտար։

Ուրախութենէս սկսայ քայլերս բազմապատկել, և կը զարմանայի թէ ի՞նչպէս այս անբնակ և ամայի երկրիս մէջ կին մը կը բնակի, և թէ ի՞նչպէս ոչխարը հոս եկեր է։

Կինը երեսուն ամեկան կար, սակայն դէմքն յայտնի կերևար թէ թշուառութիւնը եղծած էր թէ՛ իւր գեղեցկութիւնը և թէ՛ երիտասարդութիւնը։

Կնոջ դէմքը հետաքրքրութիւնս շարժեց. քովը մոտենալով հարցուցի թէ ի՞նչպէս եղեր է որ հոս կը բընակի։

Այն ատեն Թշուառ կինը սկսաւ պատմել ցաւագին ձայնով մը այսպէս։

"Երեք տարի կայ որ այս անբնակ և ամայի լեռները կը բնակիմ. ծառերու, լերանց գագաթներէն, և երկնից կամարէն զատ ուրիշ բան մը չեմ տեսած մինչև ցայսօր։ Յորեկները օրապարէնս ճարելու կգբաղիմ, իսկ գիշերները լուսնոյ արծաթագոյն լուսովը կը մխիթարուիմ. և շարունակ այս խօսքը կը կրկնեմ թէ՝ այս ամէն իրաց Արարիչը հարկաւ ինձ պէս Թշուառ մէկն ալ երեսէ չի ձգեր։

"Երեք երկար տարիներէ ետքը ահա՝ այսօր բանական արարած մը կը տեսնեմ և անոր ձայնը կը լսեմ։ Դժբաղդութիւն մ՝էր որ զիս այս դառն կենաց դատապարտեց, մանկութենէ փափկութեան վարժուած, այժմ անտառաբնակ կանցընեմ օրերս"։

Այս խօսքերը ըսելով սկսաւ լալ, և ապա շարունակեց իւր պատմութիւնը։

Ես ծնած եմ Հնդկաստանի մէջ ազնուական ցեղէ մը. գրեթէ տասն և վեց տարեկան էի երբ հարս եղայ երևելի Աստեղի մը։ Բայց հազիւ ամսուան մը ամուսնացած էի, Աֆղանստանցիք մեր երկրին վրայ յարձակեցան։

Ամուսինս թագաւորին և իւր հայրենեաց ծառայելու համար ստիպուեցաւ պատերազմի երթալ, որով իրարմէ բաժնուեցանք։

—Տիկին, ըսի ընդմիջելով անոր խօսքը, կը

տեսնեմ որ միևնոյն թշուառութեան ենթակայ եղած ենք, ո՜հ ի՜նչ տխուր օր, յորում ես ալ քեզի պէս ամուսնէս բաժնուեցայ։

— Բաժանման օրէս 'ի վեր, շարունակեց կինը, մէյմ՚ալ չի տեսայ զանի։ այնուհետև թշնամիները զիս գերի բռնեցին։ Բամշաթքա տանել ծախելու նպատակաւ։

Ուստի նաւ մը դրին զիս յիշեալ երկիրը տանելու։ Բ.յոչափ կրնամ մակաբերել թէ, ապրիլ ամսոյ գիշեր մը երբ նաւը հովին միջոցաւ կը սահէր կերթար. երկնից կապոյտ կամարին վրայ կը շողային աստղերը. գեղափայլ թագուհի լուսնոյ սկաւառակին լոյսը կը թափանցէր մինչև ծովեզերեայ անտառներու ծառոց գագաթները որոնք գիշերուան զեփիւռովը կը շարժէին։

Բայց այս գեղեցիկ պայծառութիւնը գրեթէ շատ քիչ տևեց, վասնզի լուսինը սև ամպով մը ծածկուեցաւ։ շարաթուշակ փոթորկի մը նշան էր այս։

Բ.յս բանս նաւապետը հասկցաւ, ուստի իւր նաւաստիներուն հրաման ըրաւ որ առագաստները գոցեն անմիջապէս։

Սկսան հողմերը սաստկանալ, և անձրև ու կարկուտ տեղալ, նաւը խաղալիկ եղած էր ալեաց և մենք յուսահատ ընկղմելու վրայ էինք։

Բ.յս երկար ժամանակուան մէջ անկարող էր նաւապետը որ նաւը Որէա դարձնէ։

Վերջապէս լեռան պէս ալիքներ նաւին բաղ-

խելով նաւը Թէրնէի աւազոտ ծոցը խրեցին :

Առաջի գիշերը հոն անցուցինք , և առաւօտուն երբ արևուն ճառագայթները Ապաէրի լերանց գագաթէն կը բարձրանային , նաւապետը երկու թնդանօթ արձակեց մօտ քաղաքներէ օգնութիւն խնդրելու համար , բայց՝ 'ի զուր .

Երկու օր սպասելէնէս վերջը , անօթութեան չի կրնալով համբերել , պարտաւորեցանք այս անբնակ և ամայի լեռները տարածուիլ :

Ուրիշ բան չէր տեսնուէր բոլոր ծոցիս մէջ . մի միայն ընդարձակ բլուր մը՝ մոխրագոյն ժայռերով որուն ստորոտը ինչուան ծով կը տարածուէր . իսկ ժայռերը մամռով պատած կը դժուարեցնէին մարդուս բլուրը ելլել . և կերևայ թէ երբէք բնակութիւն հաստատուած չէ այս երկրիս մէջ :

Նաւէն դուրս ելայ հետս դանակ մը և յարդէ անկոյին մը առած զորոնք նաւաստիները թողած էին . դժուարաւ անցայ այս խորտուբորդ ճամբան . և երբ Ապտէրի լեռը կելլէի՝ յանկարծ ականջիս սոխակի մը երգելու ձայնը եկաւ , որն որ իւր զմայլելի ձայնովը անտառները կը թնդացնէր և նաւաբեկութենէ ազատած թշուառիս սրտին սփոփանք մը կաղդէր : Այս ձայնին կընկերանար առուակ մ՝ալ , որուն փայլուն ջրերը ծաղկաստանի մը մէջէն սողոսկելով կանցնէին այն տեղէն :

Հոն քիչ մը կանգ առի ծարաւս անցնելու , և մէկ կողմէն կը մտածէի բնակութիւնս հոս հաստատել :

Սակայն յարմար տեղ մը չի գտնելուս, սկսայ լեռնէն վար իջնալ, և այս կաղնիին խառնչը գըտայ։ Ան ատենէն 'ի վեր հոս կը բնակիմ, և բաց 'ի գետնախնձորէն ուրիշ բան մը կերած չեմ։

Երեկ առաւօտ երբ կակուղ բարակ կաղնիի ճիւղերէն կողով մը հիւսելու նստած էի, բանջարեղենները մէջը դնելու համար, որոնք իմ օրական պարէնս են։ յանկարծ ծառերու խշրտոց մը զիս շփոթեցին, և վախով դարձայ ետիս տեսնելու համար թէ ինչ բան կը խառնէ զիս։

Մէյմ'ալ երբ այս անմեղ և օրհնեալ անասունը որ տեսայ, բոլոր վիշտս ուրախութեան փոխուեցաւ։ քանզի երեք տարիէ 'ի վեր այս առաջին անգամն էր որ իմ առանձնութեանս ընկեր մը ունեցայ։

Այս կենդանին վազելով եկաւ առուակէն ջուր խմել։ որչա՜փ կզմայլէի, երբ կը դիտէի թէ այս անմեղ կենդանին առջի երկու ոտիցը վրայ չոքած ուրախութեամբ իւր ծարաւը կը յագեցնէր, և մերթ ընդ մերթ կը դառնար չորս կողմը կը նայէր։

Ղէի ուզեր զանի խառնվել, ուստի երբ այսպէս զմայլած կը դիտէի, մէյմ'ալ յանկարծ ի՛նչ տեսնեմ, գայլ մը մռնչելով կուգար դէպ 'ի առուակը, ուր որ այս անմեղ անասունը ջուր խըմելու պարապած էր։ Խեղճ անասունը անշուշտ որս պիտի ըլլար գայլանին։ ուստի զանի ազատելու համար գօտեորեցայ, մէկէն կաղնոյ ճիւղ մը կըտ-

ելով՝ սկսայ հալածել զգայլը առանց երկնչելու. վասն զի այս նոր կեանքս ինձ ուժ մը տուած էր և կանացի երկչոտութիւնս որ բնական է, բարձած էր։ Յետոյ այս անասունը բռնելով՝ ելի իմ խրճիթս։ Հետևեալ օրը կենդանւոյն հետքն կերացած դաշտը եկայ բանջարեղենս ուտելու, և ահա՛ դուք ալ հասաք։

Ուրախ եմ որ ոչխարի մը պատճառաւ բանական էակ մը կը տեսնեմ, ուսկէց երկար ատենէ ի վեր զուրկ մնացած էի։ Ա՜հ, ինչ դառն օրեր անցուցի այս խոռոչիս մէջ, ո՞րչափ արտասուք թափեցի իմ սիրելի ամուսնոյս, Հայրենեացս, և տնական կեանքիս վրայ, զորոնք կորսնցուցի. և թերևս ո՞վ գիտէ յաւիտեան չի կրնամ վայելել։

Այս խոռոչիս մէջ որ իմ կենացս օրերը անցուցի, ուրիշ մխիթարիչ մը չունէի երկրիս վրայ բայց եթէ այս աղօթագիրքը, զոր դրացի բարեհամուհիս ինձ ընծայած էր,,։

Այս ըսելով գիրքը ինձ տուաւ. առի զայն՝ այլ հազիւ թէ բացի գիրքը, առաջին անգամ գիր մը նշմարեցի, կարդացի որ այս էր գրուած։

Յ-ԵԺՇԿԱՆ ՅԻՇՈՂԱԿ ՁՈՐ ԸՆԺԱՅԵ
Յ-ԼԻՍՆԷՆ՝ ՆՈՐԷՆ ՄՈՒԵՐԷՆ ԲՈՒԵ-
ԿՈՄՈՒՀԷՆ ՀՈՒԵՖԱՆԷ։

Այս տողերը մէկ երկու անգամ կարդացի զարմանալեօք և սրտի անձկութեամբ։

Կինը գուշակեց ներքին յուզմունքս. և երբ կը պատրաստուէր բերանը բանալ, ահա՛ ես փութացի հարցնել թէ ի՞նչպէս իր ձեռքը անցած է այս աղօթագիրքը:

—Ոտարի ձեռք չէ անցած. այն օրէն 'ի վեր երբ ընծայուեցաւ ինձ այս գիրքը, այն օրէն 'ի վեր միշտ պակաս չեմ ըրած քովէս. ամուսինս ալ ըսէպ կը կարդար:

—Ո՞վ կըսուէր ամուսինդ, հարցուցի անձկանօք:

—Ա՜լա—Պէրժան ասպետ, որ շատ պատերազմներու մէջ մեծամեծ քաջութիւններ ըրած է, և վերջին անգամ Աֆղանստանցիք մեր վրայ յարձակելու ատեններին՝ թագաւորին հրամանաւ գնաց թշնամեաց դէմ, և մէյմ՝ալ անոր վրայ լուր մը չառի անկից ետքը:

Ատածէ անգամ մը թէ ինչպէս յուզուեցայ. այս կինը իմ ամուսինս էր. ճանչցուցի ինքզինքս գրկուեցանք երկար ատեն ուրախութեան արտասուք թափելով:

Այն երեկոյ խոռոչին մէջ անցուցի, և հետևեալ օրը ոչխարը հետս առի տիրոջս դառնալու. խոստանալ՝վ ամուսնոյս որ ամէն օր գամ զինքը տեսնեմ բոլոր հօտովս:

Ձմեռը միշտ Յուլիանէի քով կուգայի, անոր պարէն բերելով մոխրոյ մէջ եփած հաց, կարագ, և պանիր. ու կրակ շինելու համար ածուխ. և մէկտեղ անցուցած ժամերնուս մէջ չէինք

կշտանար մեր գլխուն պատահածները մարամասնաբար իրարու պատմելէ ։

ԳԼ. Զ.

ԾԵՐՈՒՆՈՑՆ ՊԱՂԵՍՏԻ

ԴՐԱՑԻՆԵՐԸ

Պարունը հասնելով՝ բոլոր բնութիւնը տգի առած էր ։ Ակսեր էին ծառերը ծլիլ կանաչնալ, թռչնիկները իրենց անոյշ երգերովը գարնան արշալոյսը ողջունել, բոլոր դաշտերը և մարգագետինները դալարեօք ծածկուած էին ։ Ընդալեան գետը կարկաչասահ հոսելով՝ իր հայելիի նման ջրերը կոռոգէին այս դաշտերը ։

Կինս գտնելէս 'ի վեր կմտածէի թողուլ ծառայական պաշտօնս և երթալ կնոջս հետ ապրիլ. ուստի տիրոջս իմացուցի իմ դիտաւորութիւնս. որուն հաճեցաւ, և հաւատարմութեանս փոխարէն երկու ոչխար շնորհեց արու և էգ. ուրիշ ոչխար ալ գնեցի իմ ստակովս և անոնց կաթովը մենք կապրէինք. իսկ նոցա բուրդերէն Յուլիանէ գուրպա կը հիւսէր, որոնք Նորոյ գիւղը կը տանէի ծախելու ։

Իսկ ես խորհեցայ երկրագործութեամբ այս անմշակ և ամայի երկիրները ծաղկեցնել. բայց նախ

օր մը ուզեցի Յուլիանէին գաղափարը իմանալ՝ թէ կուզէ՞ հոս կենալ, ապա թէ ոչ հնդկաստան անցնիլ։

—Ես ալ կընտրեմ բնակիլ այս երկիրները, քան թէ քաղքի խռովութիւններու մէջ թէև հանգըստութեամբ »։

Ամէն բան որոշուեցաւ. ուստի գացի Նորց գիւղէն երկու որմնադիր բերի, և այս տեղս խրըճիթ մը կանգնեցինք կաղնիի ճիւղերէն. ոչխարաց համար ալ գոմ մը պատրաստեցինք խրճթին մէկ կողմը, որոնց թիւը տարուէ տարի կը շատնար։

Ամառ մը երբ օդը ջինջ ու պայծառ էր, շուտ մը խրճթէն դուրս ելայ և գացի գոմ ոչխարները կթելու. և 'ի վերջոյ եկայ Յուլիանէի քով. և որովհետև նոյն օրն ալ գիւղ պիտի երթայի, Յուլիանէ իւր հիւսած գուրպաները բերելով մաղաքիս մէջ դրաւ, և քիչ մը նախաճաշիկ ընելէս վերջը ճամբայ ելայ դէպ 'ի գիւղը։

Սովորութիւն ունէի ամէն ժամանակ գետին եզերքը նստիլ յոգնութիւն առնելու համար. իսկ Յուլիանէ երեկոյեան դէմ բլրակի մը վրայ կելլէր և կը դիտէր իմ գալուստս։ Ու եթէ դժբաղդ արկած մը պատահէր իրեն, բարակ ժապաւինով կապուած կտաւի մը կտոր կը կախէր բլրակին վրայ գտնուած ծառէն նոյն դէպքը ինձ իմացնելու համար։

Նմանապէս նոյն օրն ալ գացի գետին եզերքը նստայ մինչև արևը հորիզոնին վրայ լաւ մը

բարձրացաւ, և յետոյ մտայ գիւղը։

Հ՞ատ յաջողութեամբ իմ վաճառքներս ծախելէս ետքը՝ խրճթիս պէտք եղած գործիքները գընեցի և սկսայ խրճիթս վերադառնալ։

Դրեթէ կէս աւուր մոտ էր խրճթին դառնէն ներս մտայ, ուր Յուլիանէ բուրդ կը մանէր։

Հ՞ատ ուրախացաւ որ աղէկ գնով ծախեր եմ տարած ապրանքներս, վասն զի լեցուն գրպանով ետ դարձեր էի այս անգամ։

Այսպէս երբոր զուարճութեամբ Յուլիանէ իւր ձեռագործը, ես ալ՝ մշակած երկրիս շուրջը ծառի ճիւղերէն պատ մը հիւսելու պարապած էի, յանկարծ կառքի և ձիոց ոտքի ձայներ առնելով շփոթեցայ և կուզէի իմանալ թէ արդեօք ո՞վ են որ այս ամայի երկիրը կուգան։

Այս մատնանշով պարտիզէն դուրս ելած

տեղն երիտասարդ սպասաւոր մը զիս դիմաւորեց և հարցուց թէ՝ «ո՞ւր է Ապտէրի լերանց ստորոտը բնակողներուն խրճիթը»։

Հաստատական պատասխանիս վրայ սպասաւորը գնաց կառքին քով և քիչ մը տեղնէն ետքը կառքին մէջէն կին մը դուրս ելաւ և սկսաւ դէպի խրճիթը իւր քայլերը ուղղել։ Յուլիանէ՝ որ իմ ետեւէս դուրս ելած էր, երկրին սովորութեանը համեմատ կինը դիմաւորելով խրճիթ հրաւիրեց. ես ալ սպասաւորէն իմացայ թէ՝ Նորոյ գիւղին տիրուհին էր, և փութանակի մտայ խրճիթը՝ ուր որ Յուլիանէ մեր երկուքէն անցած դարձած բաները կը պատմէր իւր աչքերէն արտասուաց հեղեղ մը վազեցնելով։

Տիշտ գիւղին տիրուհին հիացմամբ կերպ կերպ հարցումներ կ՚ընէր, միանգամայն արտասուելով. և մէյմալ ամուսնոյս վիզը պըլլուեցաւ։ Զարմացայ այս նորանշան դէպքիս վրայ. և դիտեցի կինը՝ որ Յուլիանէի հետ գրկախառնեալ, ո՞վ իմ վաղեմի դրացիս Յուլիանէ, ես եմ Հռիփսիմէ և..... ըսաւ՝ ու մարեցաւ։

Սպասաւորները շուտ մը ջանացին խելքը գլուխը բերել. իսկ Յուլիանէ խորին քունէ արթընցած մեկու մը պէս ապշած ասդիս անդին կը նայէր։

Վերջապէս երբ խելքը գլուխը եկաւ Հռիփսիմէ սկսաւ պատմել։

«Պատերազմի ժամանակ Զոմաս ամուսնոյս

հետ նաւով եկանք Ղինաստան. ուր բաղդերնիս բանեցաւ և մեծգումար հարստութեամբ այս գիւղը մեզի հարկատու ըրինք. հիմայ ալ հոս կը բնակինք: Գացէ՛ք, պոռայ սպասաւորներուն, ասա՛ս տուէք ձեր տէրոջ իմ ամուսնոյս, թէ մեր վաղեմի դրացիները Վաչտ—Պէրժանը և Յուլիանէն գտանք ,,:

Երեկոյին գիւղապետ իշխանը մեզ այցելութեան եկաւ, և ջորներնիս զերբաբ գրկելով կը կրկնէինք անդադար, թէ Աստուած իւր արարածները ձեռքէ չի թողուր. և շատ անգամ թշուառութիւնը կը խրկէ, որպէսզի անոր յաջորդող երջանկութիւնը մեզ աւելի զգալի ընէ:

Հովուական կենաց զուարճութիւնը հաճոյ երևցաւ դրացոյս. ուստի հրամայեց որ հոս փոքրիկ խրճիթ մը պատրաստուի, որպէս զի հոս բնակի իւր կնոջմովը և մէկ զաւակովը որ երկու տարեկան էր ՊԵՏՐՈՍ անունով: Արժան է հոս քանի մը խօսք ըսել թէ մեր այս երկրին մէջ բնակիլը Գոմմաս և Հրիսիմէ ինչպէս իմացեր էին:

Օր մը երբոր Գոմմասի տանը մէջ պատ մը հիւսելու գացեր էին այն որմնադիրները որոնք իմ խրճիթս հիմնարկեցին. և ցորեկ ժամանակ տանը պարտէզին մէջ ճաշի միջոցին իրարու հետ խօսելով՝ հնդկերէն լեզուաւ այսպէս կըսէր անոնցմէ մէկը:

,, Անգամ մը երբոր պանդոկին պարտէզին մէջ նստած էի, յանկարծ հովիւ մը քովս գալով

աղաչեց ինձ թէ՝ քանի մը ընկերներովդ եկո իմ հետս փոքրիկ խրճիթ մը շինելու. ուստի ես ալ ընկերս առնելով սկսանք հովուին ետևէն երթալ։

Գացած ժամանակնիս բոլոր ճամբանիս անտառէր. վերջապէս Ապտէրի լերանց ստորոտը որ հասանք, հովիւը մեզ ցոյց տուաւ մարգ ապետնին մէջ առուակի մը քով տեղ մը ուր կանգնեցինք խրճիթը նաև կին մը ունէր որ շատ գեղեցիկ էր, և կարծեմ անունը Յուլիանէ էր, որովհետև այս անունով կը կանչէր զանի. կառքի համար ալ ճամբայ մը բացինք։ Բոլոր խրճթին շուրջը եղևնիի և կաղամախի ծառեր ըլլալուն շատ շքեղ տեսարան մը կը ներկայանար։ Մեր տէրը այսպիսի լեռներ անմշակ թողլով ինչո՞ւ գոնէ ամառը իր կեանքը անցնել չուզեր։ Ռիխիմէ որ տանը պատուհանին քով նստած կաշկանտէր, այս պատմութիւնը ասելով. ստուգելու համար ելկեր է մեր խրճիթը, բով զիրար գտանք։

Թոմմասի ծախիւք փոքրիկ մատուռ մը շինուեցաւ, ուր մենք ամէն ժամանակ կերթայինք ընտանեօք հանգերձ աղօթելու։

Ո՜հ, այն օրերը ո՞րչափ շուտ անցան, ո՞րչափ փոխուած է ամէն բան. այն մատուռը, ուր երբեմն երջանիկ ընտանիք մը կաղօթէր, այժմ անոր աւերակաց վրայ կարտասուէ այն ընտանեաց վերջին մնացորդը։

ԳԼ. Է.

ԲԵՐԿՐԱԼԻՑ ԼՈՒՐ ՄԸ

Մառուան տաք օր մը գիւղ պիտի երթայի տանը և երկրագործութեան համար պէտք եղածները գնելու։

Ուստի ճամբայ ելայ. և ինչպէս որ ամէն ժամանակ սովորութիւնս էր Ադալեան գետին եզերքը յոգնութիւն առնել, նոյն օրն ալ շատ խոնջեցած էի վասնզի շատ վաճառք առած ըլլալուս, մանաւանդ որ կողմէ մ'ալ ծաղիկ կը տանէի այս անգամ, զի քաջ գիտէի թէ շինական կանայք լեռնային ծաղիկները շատ կը սիրէին։

Ինչև որ արևը յաւ մը բարձրացաւ հորիզոնը հոն նստայ, և ապա կամաց կամաց սկսայ քայլերս դէպ'ի գիւղը ուղղել, ուր հասնելուս պէս յաջողութեամբ իմ վաճառքներս ծախեցի։

Գիւղին մէկ ծայրը կաղնիի ճիւղերէ շինուած կամար մը կար, ուրկէ աղէկ կը տեսնուէր այն բլուրը և ծառը, որուն վրայ նշան կը դրուէր եթէ դժբաղդութիւն մը պատահած ըլլար խրճթին մէջ։

Նոյն օրն ալ չեմ գիտեր ինչ պատճառաւ գացի կամարը դիտելու մեր բլրակը, և ամէն անգամ ալ ուրախութեամբ դարձայ իմ գործիս, վասնզի

նշան մը չէի տեսած : Ուրեմն երկար ատեն մնալու գործ մը չունենալուս՝ տանը և երկրագործութեան համար պէտք եղածները գնելէս վերջը, սկսայ խրոխտիթս վերադառնալ :

Երբ կամուրջին ծայրը հասայ, միտքս եկաւ որ նշանը նայիմ. և տեսայ թէ Հրիփսիմէն բլրակին վրայ կեցած և Պետրոսին կարմիր հագուստը ծառէն 'ի վայր կախած էր :

—Ա՛հ, ըսի, արդեօք Յուլիանէի դժբաղդութիւն մը պատահեցաւ, և Հրիփսիմէն ալ նոյն դէպքը իմացնելու համար բլուրը եկեր է : Երբ այսպէս մտատանջութեամբ քայլերս կը կրկնապատկէի,

յանկարծ տեսայ փոքրիկ Պետրոսը որ ձեռքերը բացած կը վազէր զիս դիմաւորելու, և Հրիփսիմէն ալ խրճթին սեմոցը վրայ կեցած էր ձեռքը ծաղկէ փունջ մը բռնած :

Ցրբոր խրհթէն ներս կը մտնայի, Հռիփսիմէ ձեռքի փունջը ինձ տալով՝ "ուրախացիր բարեկամ ըսաւ, Աստուած քեզի աղջիկ զաւակ մը շնորհեց"։

—Ի՞նչ անպատում ուրախութիւն ըսաւ ծնունին ինձ, և մէկէն մի մէկ արտասուաց հեղեղ մը իւր աչքերէն հոսեցնելով. այն օրը երբ խրճիթս մտնելով տեսայ նորածին մանուկը, իսկ Յուլիա արտասուելով աղօթք կընէր Աստուծոյ ձեռքը յանձնելով իւր մանուկը։ Այս աղօթիւքը յաւիշտակուած Յուլիանէ տակաւին չէր գիտեր իմ գալուստս, բայց երբ աղօթքը լմնցաւ դարձուց երեսը և ուրախութեան նշոյլ մը փայլեցաւ իւր դեմքին վրայ, իբրեւ կուզէր ինձ ասեսել թէ մայր եղած է։

Յովհաս տակաւին չէր գիտէր այս ուրախութիւն և բերկրալից լուրը, ուստի փութացի երթալ բլրակին ծառէն նշանը կախել, որպէսզի Յովհաս աճապարէ մեր հիւրը դառնալու։

Ժամու մը չափ սպասեցի սակայն մէկը չերևեցաւ. մէյմ՝ալ երկու սպասաւորներ եկան, և ըսին թէ՝ "Ֆէրէրնիս բլրակին նշանը տեսնելով շատ անհանգիստ եղաւ, և մեղ խրկեց որ իմանանք թէ ինչ դժբաղդութիւն պատահած է"։

Դժբաղդութի՞ւն ըսաւ, Հռիփսիմէ, դժբաղդութի՞ւն. ընդհակառակն անպատմելի ուրախութիւն. դացէ՛ք աւետիս տուէք թէ մեր բարեկամ Պալտ—Ֆէրժանի և Յուլիանէի աղջիկ զաւակ մը ծնաւ։

Երեկոյին Թոմմաս եկաւ հետը կապոցով մը, զոր սպասաւորը շալկած էր. այս կապոցին մէջ Նորածին մանկան պէտք եղածները կային, կապոցը բանալով՝ Յուլիանէի և Հռիփսիմէի ոսկւոյ խաչեր, Նորածին մանկան ոսկի, և Պետրոսին ալ փոքրիկ փսիաթէ գլխարկ մը ընծայեց։

Այն իրիկունը մեր ուրախութիւնը կատարեալ ընելու համար Հռիփսիմէ որոշեր էր որ կերակուրը մարգարէտին վրայ ուտուի։ Այս որոշումը մեզի շատ հաճոյ եւրեցաւ, և կերակուրէն վերջն ալ բաւական ատեն հոն մնացինք և սովորականէն աւելի զուարճացանք։

Մանուկը կաճէր օրէ օր, և Պետրոս շատ սէր կցուցնէր մանկան վրայ, չունէր այն նախանձը՝ որ ընդհանուր է մանկանց համար. ընդհակառակն միշտ կը հսկէր, կարծես թէ բնութիւնը զանի եղբայր մը ծնած էր։

Յուլիանէ չէր մոռնար երբէք մանկան համար աղօթելու պարտաւորութիւնը, և շատ անգամ գուրպա շինած ատենը կերգէր։

Բայց Թոմմաս առաջուան պէս ուժեղ չէր. վասն զի իւր կենաց օրերը կը կարճնար, և իւր ըսպասաւորներն ալ գող և յաշտակիչ ըլլալնուն գրեթէ իւր տարեկան շահերէն շատ մնաս ըրաւ, անոր համար ես շատ կաշխատէի, և երկու օրը անգամ մը գիւղ կիջնայի խրճթին պիտոյքը հոգալու։

Գիշեր մը, երբ լուսինը երկնից կամարին վրայէն մեր խրճիթը կը լուսաւորէր, մենք ևս նըստած էինք խրճթին դրանը առջև. սկսայ այսպէս ըսել՝ "Սիրելիդ իմ Ֆոսվմաս. մենք կը ծերանանք օր օրի վրայ. արտերը մշակելու հալիւ կը հասնինք. որով ամէն ժամանակ գիւղ ինչալ և հաց գնելու չենք կրնար. մանաւանդ ձմեռը ցորեններս աղալու համար ջաղացք մը պէտք է. ուստի կը մտածեմ կաղնիի ծառերէն ջաղացք մը շինել որպէս զի ջուրին ուժովը դառնալով ալիւր ունենանք. և քանի ալ փոքրիկ փառան պէս բան մը շինելով ամէն օրուան հացերնիս եփի"։

—Եւ ի՞նչպէս կըլլայ այդպէս, ըսաւ Հռիփսիմէն, խօսքս ընդմիջելով։

—Հա՛ տո դիւրին կերպիւ, զի ամէնէն մեծ դըժուարութիւնը ջաղացքին անիւն է, իսկ քարը՝ այն ալ գիւղէն կը գնեմ, և Աստուծով կը յաջողիմ իմ այս ձեռնարկած գործոյս մէջ։

Յուլիանէ որ պատուհանէն մտիկ կընէր, կեցցե՛ս Վա՛ալտ—Պէրժանդ իմ ըսաւ, շատ աղեկ մըտածեր ես. ասանկ մէկ ջաղացքի մը կարօտ էինք. ասով մեր զաւակաց ալ մեծ դիւրութիւն մը պատրաստած կըլլանք։

Հետևեալ առաւօտ երկնից հորիզոնը թէև ամպամած էր և մրրիկ մը կը գուշակուէր, ճամբայ ելայ դէպ 'ի գիւղը, որպէս զի ջաղացքի մը քար գնեմ։

Այս անգամ ճամբան շատ ուրախ էի, զի կմտածէի թէ այս կերպով մեր փոքրիկ ընտանեաց երջանկութիւնը պիտի յորինէի, այս էր իմ ջանքս ալ. և իրաւամբ փոքրիկ ջաղացք մը և փուռ մը բաւական պիտի ըլլային ընտանեաց բարեկեցութիւն մը պատրաստել: Իրաւ դժուարին էր այս ձեռնարկած աշխատութիւնս վասն զի անհմուտ էի, սակայն տեսած ըլլալով ջրի ջաղացքներ, անոնց ձևը, շէնքը աղեկ գիտէի, և կը յուսայի ալ որ յաջողիմ: Բո՛ղ որ արուեստաւորներու օգնութեան ալ պիտի դիմէի, որպէս զի կարող ըլլամ անոնց միջոցաւ գլուխ հանել այս դժուարին գործը:

Այս մտածմամբ մանաւանդ այս ուրախութեամբ գիւղ հասնելուս պէս ջաղացքի քար մը գընելէս ետքը, արուեստաւորներ գտայ և անոնց իմացնելով իմ դիտաւորութիւնս ստիպեցի որ հետևեալ օրը կանուխ խրճիթս գան, հետերնին բերելով քարը: Այս ամէնը կարգի դնելով պատրաստուեցայ դառնալ խրճիթ, վասն զի ամպերը կը թանձրանային,

Հաղիւ թէ խրճիթ հասած էի, հովը սաստկանալով սկսաւ սաստիկ ձայնիւ և ուժով մը ցընցել անտառին մէջի հին ու մեծ ծառերը, և հեղեղի պէս անձրև գալ: Երկնից կամարը թանձր ամպերով պատած կորոտար, և փայլակներուն ու կայծակներուն զարհուրելի ձայներէն բոլոր երկիրը կը թնդար, անանկ որ այս զարհուրելի լու-

սովը ամբողջ մթին անտառը կը փայլէր։

Փոքրիկ Պետրոսը ու իր մայրը և Յուլիանէ մրրկին վախճանին կսպասէին։

Բայց երբ մրրիկը դադրեցաւ, Յուլիանէ և Հռիփսիմէ ու Պետրոս խրճթին աշտարակացը վրայ եղած ուշադրութեամբ կը դիտէին այն ծիածանը, որուն գեղեցիկ գոյները մեծ գոյն ամպերուն մէջէն խիստ որոշ տեսնուելով, ամբողջ կամար մը կը ձևացնէին հորիզոնին մէկ ծայրէն միւսը։

Մրրկին ահաւոր բռնութենէն տակնուվրայ եղած քնութիւնը ոգի առաւ, օդը պարզեցաւ, ոսկեզոծ արևը իւր ետքի ճառագայթներովը իրիկուան կարմիր վերջալոյսը եռանէն կը թողուր, թռչնիկները ամէնքը մեկտեղ ծառէ ծառ թռչտելով իրենց անոյշ ձայներովը կը լեցնէին բոլոր անտառը։

Երբ երեկոյ եղաւ ամբողջ ըն անիքը ժողուեցաւ մարգագետնին վրայ. խօսքը նորածին մանկան վրայ բացուեցաւ, և Թոմաս ինձ դարձաւ ըսաւ. "Սիրելի՛ իմ Վալա—Պերժան, ե՞րբ պիտի մկրտենք այս նորածին մանկիկը"։

—Բանի մը օրէն, վասն զի կուզեմ որ ջալացքի և փուռան շէնքը լմնայ։

Յուլիանէ և Հռիփսիմէ շատ հաւանութիւն տուին այս խօսքիս, և որոշեցինք որ կնքահայրը մեր Թոմաս դրացին ըլլայ։

Եկաւ մկրտութեան որոշուած օրը, յորում ամենքնիս և փոքրիկ Պետրոսն ալ միատեղ որն որ

փոխանակ գլխարկը գլուխը դրած իւր մօրը հետ կերթար դէպ՝ի Ս. տաճարը։

Ս՝կրտութեան սրբազան արարողութիւնը կատարուեցաւ, և երախային անունը դրուեցաւ ՍԵԼԻՄԱՅ, որ դրացւոյս եղբօր որդւոյն անունն էր։

Այն օրը անպատմելի ուրախութիւն մը կը տիրէր մեր սրտերուն և աղքատիկ խրճթին մէջ, նորածին մանկիկը գրկերնիս առնելով կօրհնէինք և Աստուծոյ կը յանձնէինք։

Ամէն երեկոյ երբ յոգնած վերադառնայինք խրճիթնիս մեր զաւակները կը սիրէինք և անոնց մէկ ժպիտը մեր լիակատար աշխատանացը հատուցումն էր

Սելիմայի համար հիւսեցի կաղնոյ բարակ ճիւղերէ օրորոց մը, այս գեղջուկ օրորոցին մէջ կը հանգչեցուներինք մանկիկը։

Աշնան եղանակին մէջ էինք. ուստի քանի մը օր խրճթին համար փայտ կոտրեցի ձմեռուան համար, և այնուհետև գիւղ իջնալով խրճթին ամէն պիտոյքը հոգացի, վասն զի կերևակայէինք թէ շատ ձմեռ պիտի ըլլայ։ և ինչպէս որ կը կարծուէր, իրօք պատահեցաւ այն տարին, վասն զի քիչ ատենէն սոսկալի մրրիկներ տեղի ունեցան, բոլոր ծառերը իրենց տերևներէն մերկացան. և զանազան կենդանեաց ու թռչնոց իրենց ատենէն դուրս տաք կողմեր յաճախելնին ձմեռուան կենդանի և ազգու օրինակներ էին։

ԷԳԼ. Ը.

ԶՄԵՌ

Երկիրս իբրև ճերմակ քողով մը ծածկուած կը թուէր մարդուս աչքին ։ Ձիւնը՝ ամառուան գեղաձիծաղ օրերուն բոլոր գոյնզգոյն ծաղկները ու բոնք գեղեցիկ և հաճոյական տեսարան մը կընծայէին աչաց՝ իւր տակը թաղած , ու երկիրս զարդարող կանանչագեղ խոտերը անյայտ ըրած էր , և ծառերը իրենց տերևներէն մերկացած ձմեռուան թագաւորին տեսլի տուած էին իրենց մերկ ճիւղերուն վրայ ։

Վերջապէս համայն բնութիւնը սոսկալի տխրութիւն մը պատած էր , և անտառը ալ չէր հնչուէր թռչնոց դայլայլիկներէն . ահագին լռութիւն մը կը թագաւորէր հոն , և այս լռութիւնը միմիայն անտառաբնակ բուերու եղերական ձայներէն , և գազաններուն ոռնալէն կը վրդովուէր ։

Ձիւնով ծածկուած անտերև ծառերուն ճիւղերը ՝մերթ ընդ մերթ փչած բքաբեր քամիներէն շարժուելով՝ իրենց վրայ կուտած ձիւնը քամին ուժովը կը սահէր կիյնար , և իրաւցնէ այն ձիւնապատ դաշտերը արհաւիրք մը կաղդէին մարդուս և կը հրաւիրէին վայրի կենդանեաց , որոնք ձըմեռուան տխուր եղանակին մէջ կը թափառին ան-

ռառները իրենց որսը ճարելու, և կը յանդգնին մօտակայ գիւղերը իջնալ, ու հոն համարձակ կեն-դանեաց վրայ յարձակելով զանոնք իրենց անյագ կոկորդաց զոհ ընել։

Ինչպէս որ ըսինք այն ձմեռը խիստ սաստիկ էր։ իւր սոսկալի լռութեամբը ահաւոր տեսարան մը կը ներկայացնէր։

Այն առուակը՝ որ մեր դժբաղդներուն զովացուցիչ ըմպելիքի տեղ կը ծառայէր, իւր ականակիտ ջուրը իբրև ահագին քարաժայռ մը ցըրտութենէն սառելով անթափանցելի եղած էր, և ալ ևս անոր զմայլելի շառջման ձայնը չէր լսուէր, և որուն պտոյտ շրջանները որոնք առաջ ծաղիկները կ'ոռոգէին, մեռած կերևնային։

Իրաւամբ անտանելի էր այս ձմեռը մեզի, որուն նման ոչ երբէք պատահած էր քանի որ այս ամայի երկիրս եկեր էինք, և բնութեան տխուր երևոյթը մեր յուզեալ սրտերուն ցաւերը կը նորոգէր։ Այց այսպիսի եղանակի մը մէջ մեր բովանդակ ուրախութեան պատճառող մեր գրաւականները եղան, որ մինչև մոռցնել տուին ձմեռուան քաշած նեղութիւնները։

Կորովագութ մայրերը փոխադարձաբար իրենց զաւակունքը կը խնամէին, անոնց մէջ ամենևին խորութիւն չիկար, տղաքը մեկ անկողնոյ մէջ կը քնացունէին։ և անոնց մէկ ձայնը երկու մայրերը հաւասար տրտմութեան մէջ կը ձգեր, և եթէ

մին հոն չի գտնուէր, միւսը երկու անմեղ և հըրեշտակային մանկունքը կը խնամէր այն խանդաղատանօք՝ ինչպէս որ իւր բնիկ որդւոյն կը ցուցնէ:

Ետոյ հետէ տղայք մեծնալով իրենց մարցը և մեղ աւելի ուրախութեան պատճառ կըլլային; մանաւանդ երբոր իրենց բանականութեան առաջին ցոյցքը, այսինքն մայր և հայր բառերու յորջորջումը կը լսէինք:

Ի՜նչ ուրախութիւն, ի՜նչ բերկրանք վըշտացեալ մարց և հարց սրտերուն, կը կարծէինք թէ անոնք կատարեալ եղած են, իրենց աշխատութեամբը զիրենք երջանկութեան լայնատարը ասպարեզին մէջ համարձակ քայլերով յառաջ կերթան, և գոհ ու հանգիստ կեանք մը կը վարեն:

Երջապէս ձմեռուան երկայն գիշերներուն երբ հովին սաստիկ կերպիւ մռնջիւնը, ձեան սոսկալի տարափներուն խախուտ փեղկերուն զարնելու ու անտառներուն սաստկաշունչ հովերէն ահեղագոչ արձագանքներուն կրկնումները, և սովալլուկ գայլին, վայրի գազաններուն, և անտառաբնակ բուերուն ու թռչուններուն զմարդ պակուցանող ձայները ահու թոզի մէջ կը ձգէին մեր հանդարտիկ և խաղաղ ընտանիքները:

Ասպէս իրիկունները ուր ամէն կողմանէ տխրութեամբ պատած էր համայն բնութիւնը. իմ և բարի դրացւոյս ընտանիքը միատեղ կրակարանին բոլորտիքը ժողուած. մեր անցուցած կենաց

երևելի դէպքերը կը պատմէինք մեր ամուսիններուն ու մեր սիրելի զաւակաց որոնք այն ատեն գրեթէ բաւական կը խօսէին և մանկական միամտութեամբ հետաքրքրաբար հարցումներ կընէին այլ և այլ իրերու վրայ, ու մեկտեղ եղբայրական անմեղ խաղերու կը պարապէին, իսկ եթէ մենք օգտակար խօսակցութիւն մը ընէինք, յօժարութեամբ մտիկ կընէին որով մեր ուրախութիւնը կը կրկնապատկուէր աւելի աղդութեամբ։

Ահա այսպէս առանց գիտնալու ձմեռուան երկայն ու տխուր գիշերները կը սահէին։

Երբոր դուրսէն տուն դառնայինք, քոյր և եղբայր ձեռք ձեռքի տուած մշտադալար ծառերուն մէջ մեր դեռը կելլէին, և զմեզ դիմաւորելու իրենց գողտրիկ համբոյրներովը կոչնչունէին, անոնց դէմքը բաւական էր բոլոր օրուան քաշած նեղութիւններս բոլորովին մոռցնելու, ուստի զանոնք

գրկած մինչև որ տուն հասնէինք, անոնց այլ և այլ հարցումներուն կը պատասխանէինք :

Իսկ տուն հասած ժամանակնիս իրենց մարցը կօգնէին առ տնին գործքերուն մէջ: Սելիմայն խոհակերոցին մէջ կաշխատ՝ էր մօրը քով, և Պետրոս որն որ Սելիմայէն աւելի զօրեղ էր՝ առուակէն ջուր կը բերէր, և գորոլագուլթ ծնողք կուրախանային տեսնելով որ իրենց որդիքը իւրեանց դեռապիթիթ հասակէն ինքզինքնին աշխատութեան մէջ կը կրթեն :

Վերջապէս անզգալի կերպիւ ձմեռուան սաստկութիւնը հետզհետէ կը մեղմանար, և երկրիս անհուն տարածութեանը վրայ արեգակին ճառագայթները սիրելով ձիւները կը հալեցնէին, որով մեր խրճիթներուն շրջակայ դաշտերը մարգագետինները և հովիտները բոլորովին երևան ելած էին, և ասդիս անդին ձիւներու փոքրիկ կոյտերը մէյմէկ բլրակներ կը ձևացնէին ցամաք երկրին վրայ որոնք երկար ատեն արեգական կիզիչ ճառագայթներէն հալելով չպիտի կրնային անհետանալ, և թէ անտառին ու բարձր լեռներու վրայ գտնուած ձիւնը ձմեռուան սաստկութիւնը կը յիշեցնէին մեզ :

Գլ. Թ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՍԵԼԻՄԱՅԻ

Ակաւ հասաւ գարունը՝ որ եղանակաց թագաւորը կոչուած է, և իրաւամբ բոլոր բնութիւնը ոգի առաւ, ձմեռուան տխուր քողը վերնալով ծառերը նոր ծլիլ սկսած, դաշտերը և մարգագետինները կանաչցած էին։ Ձմեռուան՝ որ վայրի գազաններուն ձայները մարդուս սարսուռ կը բերէին, իսկ հիմայ թռչնոց դայլայլիկները և սոխակաց զմայլելի երգերը փոխանակեցին. որոնք մարդուս սիրտը հրճուանաք կը լեցնէին։ Ադուակը որ երբեմն սառած էր ցրտութենէն. հիմայ կարկաչելով ծաղկներուն մէջէն կը սահէր և լճակին քովերը պըտոյտներ կընէր. ու ծաղկաստանները ոռոգանելով լճակը կը թափէր։

Վերջապէս սահեցան գացին այն դառն նուագները որք կը լսուէին այն մութ տունկերուն մէջ որոնց գագաթները թեթև հողմերէ շարժելով մէյ մը վարդակարմիր և ծերունիփայլ կ'երևնային և մէյ մ'ալ մթութեամբ կը վարագուրէին։

Ահա այսպէս մեր զաւակաց մանկութեան օրերը կը նմանէին մայիս ամսուն գուարճալի օրերուն,

Սելիմայն միշտ Պետրոսէն չէր զատուէր, և եթէ Պետրոս տրտմած ըլլար՝ մէկէն կիրկը կիյնար և զանի կը մխիթարէր. Պետրոս ալ փոխադարձաբար նոյնը կընէր իր քրոջը։

Երբոր առաւօտեան արշալոյսը կը ծագէր, Պետրոս և Սելիմայ կերթային առուակէն ջուր բերել, նմանապէս իրիկուններն ալ։

Շաբաթը անգամ մը Պետրոս իւր հօրը հետ գիւղ կիջնար ու տանը պիտոյքները բեռնաւորուելով խրճիթ կը վերադառնար։ Իսկ Սելիմայ մինչև Պետրոսին վերդարձին կսպասէր ըլլակին վրայ, և երբ տեսնար Պետրոսը՝ վազելով կը դիմաւորէր, և անոր կռնակի բեռանը ինքն ալ մասնակից ըլլալով ուրախութեամբ խրճիթ կուգային։

Յուլիանէ սովորութիւն ըրած էր երեկոյեան ընթրիքէն առաջ իւր համբակ աշակերտաց սիրտը կրթելու համար բարոյականի դասախօսութիւն մը ընել, և իւր դասուն հիմ բռնած էր Ս. Աւետարանը. և կը ջանար այս Ս. գրոց գեղեցիկ սկզբունքները տպաւորել անոնց մտացը մէջ։ Իւր դասերը պարզ և վայելուչ էին, ու դիւրուսոյց եղանակաւը մեծ ազդեցութիւն կընէին անմեղ պատանեկաց վրայ։

Ամէն օրուան դէպքերը մէյմէկ պատճառներ էին այս բարոյախօսին համար քննել ու գեղեցիկ բարոյական մը հանել իւր դասերը զուարճալի ընելու։

Ո՞րչափ կը սիրէր Խօսիլ Աստուծոյ սքանչելի գործոց վրայ, որոնցմով լի է տիեզերքս, և չէր կշտանար զարմանալեօք նկարագրելէ բնութեան բոլոր գեղեցկութիւնը, որ իրաւցնէ Արարչին փառքը կաւելցնէ։

Աստնցմէ ետքը զատ զատ տղոց դասերնին

կը նայէր ծաղկէ կամարին տակ, կը յորդորէր որ չի ծուլանան, ընդհանրապէս բերնով սովրեցնել կուտար Ս. գրոց պատմութիւնները, ինչպէս են Աբրահամու կոչումը, Յուդիթայ, Տուլբիթայ պատմութիւնները։ Տղայքաչ անոր ջանքը ճշմարտապէս կը համապատասխանէին, անանկ որ իրենց աւանդած դասը աղէկ պատրաստելու համար ամէն օր ցորեկները մեծ կաշնոյ մը շուքին տակ իրենց դասերը կը սովրէին իրարու հարցումներ ընելով, բարի նախանձով կուզէին իրենց աւանդու-

ած դասերը սովրիլ, և երեկոյեան դէմ վինովը կը զուարճանային, որուն հետ կընկերանային այն քաղցրաձայն թռչնիկները որոնք երեկոյեան ողջոյնին կը մատուցանէին արևը մարը մտնելու ժամանակը։

Օր մ'ալ նոյնպէս երբ Պետրոս և Սելիմայ իրենց դասերը պատրաստելու համար գացեր էին անտառը։ Իսկ ես արտերը մշակելէն յոգնած ու զուարճութեամբ մը երկնցած էի մեծ կաղնոյ մը շուքին տակ։ Ա՛էյ մ'ալ յանկարծ Սելիմայն վազելով եկաւ ու դողդղալով ըսաւ թէ՝ "Հայր իմ երբ անտառին մէջ նստած էինք, յանկարծ ծառերու խշրտոցէ մը շփոթելով անտառէն դուրս ե-



լանք, և տեսանք մեծ անասուն մը որ առուակէն ջուր խմել եկեր է, զոր երբէք տեսած չէինք, թէև գեղեցիկ է, բայց մեծ եղջիւրներ ունենալուն հա-

մար շատ վախցանք. և Պետրոս գիւղ փախաւ։

Ուրաջի անգամ մտատանջութեան մէջ էի թէ այսպիսի անատուն մը երբէք տեսնուած չէ, սակայն յետոյ Հանդարտեցայ երբ տեսայ թէ Մակոյ գիւղին կառավարին եղջերուներուն մէկն է, որ երամակէն զատուէր և այս կողմերս եկեր է։

Հանդարտեցուցի Սելիմայն, և գացի գիւղ Պետրոսը գտայ իւր հօրը քով, որ եղելութիւնը պատմէր էր հօրը։

Այս դիպուածը իրենց դասերնուն աղէկ նիւթ մը եղաւ, և այնուհետև Պետրոս և Սելիմայ դիմացի անտառը կերթային իրենց դասերը պատրաստելու։

Պետրոս՝ որն որ առոյգ երիտասարդ մ՝էր, իւր որդիական պարտաւորութեանց մէջ կը յառաջանայր, և զՍելիմայն խանդաղատանօք կը սիրէր։

Իսկ Սելիմայն համեստ օրիորդ մ՝էր դեղին մազերով, որոնք ճակտին վրայ հանգչելով մեծ վայելչութիւն կուտային անոր դիմաց. Պետրոսի վրայ այնպիսի սէր ունէր՝ որ երբէք չէր կրնար զատուիլ անոր քովէն։

Երբեմն դասերնին պատրաստելնէն վերջը կերթային դիմացի անտառը յասմիկներու և վարդերու հիւսքով իրենց համար պատրաստուած նրատարաններուն վրայ կը քնանային, երբեմն ալ կուգային ինձ օգնել երկիրը հերկելու։

Իսկ երբ երեկոյ ըլլար, նախ իրենց դասա-

տուութիւնը կընէին, և յետոյ ուրախութեամբ կերթային ժայռերուն վրայ և մինչև որ Հովմաս



կամ ես գիւղէն վերադառնայինք, հոն կը զուարճանային։

Մեր զաւակաց յառաջադիմութեանցը վրայ ուրախացած կ'օրհնէինք զանոնք և Աստուծոյ գոհութիւն կը մատուցանէինք թէ այսպիսի զաւակներ մեզ բաշխեց։

Տարիներ անցան մենք ուժէ ինկանք. այլ Պետրոս մեր տեղը ինքը սկսաւ երկրագործութեան պարապիլ. իսկ Սելիմայ թեպէտև Պետրոսի ուժը չունէր, այլ անոր սիրոյն համար գեռինը կը հերկէր, որպէս թէ կը բաղձար օգնել Պետրոսի անոր աշխատութեանցը մասնակցելով։

Զարմանալի էր այս երկու անմեղաց ծնողական սէրը. անոնց ամէն հրամանները կը կատարէին

և եթէ իրենց ըրած ծառայութեանցը համար շնորհակալ ըլլայինք, " մենք ձեզի համար ինչ որ ալ ընենք դարձեալ քիչ է ձեր այն անթիւ բարերարութեանցը համար. դուք ոչ միայն մեր մանկութեան միջոցին հոգ խնամք ունեցաք, այլ մեր դաստիարակութեանը. դուք ձեր պարտքը կատարեցիք. սակայն մենք տակաւին շատ հեռի եմք այդ մասէն,,.

ԳԼ. Ժ.

ԴԺԲԱՂԴ ՊԱՏԱՀԱՐ

ՊԵՏՐՈՍԻ

—Ահա՛ այսպէս ո՞վ ճանապարհորդ, ըսաւ ծերունին ինձ հեծկլտալով, այս բարեկիրթ զաւակները մեր վերջին օրերուն մէջ ապաւէն և մխիթարիչը ըլլալու յոյս կուտային եթէ Աստուած հաճէր.

Առաւ մը՝ երբ օդը պայծառ էր, արև նոր կը բարձրանայր հորիզոնը, թռչնիկները իրենց անոյշ երգերովը արշալոյսը կողջունէին, կապուտիկ ճերմակ ծաղկներուն թերթերէն անոյշ հոտ մը կը բուրէր: Պետրոս և Սելիմայ առուակէն ջուր բերել գացեր էին:

Թոմաս և ես նստած էինք խրճթին սեմոցը

վրայ. սակայն սովորականէն աւելի տրտում կերպարանք մը ունենալը կը յայտնէր։ Հարցնելով տրտմութեան պատճառը, իմացայ թէ գիշերը երազ մը տեսած էր. իբր թէ Պետրոս խոշնդոտներով լեցուն փոսի մը մէջ ինկած էր։

—Ընէկ երազ մը չէ տեսածդ, պատասխանեցի այլ Տիրոջը կամքը թող ըլլայ։

Նոյն օրը Պետրոս իւր հօրը հետ գիւղ գընաց տանը պէտք եղածները գնել բերելու։

Ես ալ գացած էի նոյն օրը գիւղ, Ջաղացքի վերաբերեալ գործիքներ ցորենի փոխարինութեամբ ստանալու։

Երեկոյեան դէմ Պետրոս երբ բեռնաւորուած կամուրջէն կուզէ անցնիլ, փայտահար մը խուրձ մը փայտի բեռով դէմը կելլէ, որ նոյնպէս կամուրջէն պիտի անցնի եղեր։ Եւ որովհետև կամուրջը մեկ տախտակէ կը բաղկանար, Պետրոս առանց ժամանակ անցնելու կաճապարէ դիմացի կողմը երթալ եւ էն ալ փայտահարը. բայց ինչպէս կըլլայ փայտահարը դժբաղդ պատահարով մը կը զարնուի Պետրոսին և գետին մէջ կը գահավիժէ զանի։

Նոյն միջոցին Սելիմայ՝ որ բլրակէն կը դիտէ եղեր, մեկէն իւր քոքնոցը հաներ ծառին վրայ կախէր է ազդ ընելու համար այս դժբաղդ արկածը. և շուտ մը փութացեր է կամուրջ հասնիլ, և տեսեր է թէ միայն Պետրոսին յարդէ գլխարկը ալիքներուն վրայ կը ծփծփայ, ու Պետրոս մէյ մը

ջուրին երեսը կելլէ և մէյ մ՚ալ յատակը կիջնէ եղեր։ Փայտահարը՝ որն որ ապշած կեցած է եղեր, Սելիմայն վազեր է անոր քովը, կռնակէն խուրձը վար առնելով ատիպեր է որ իրեն օգնէ, յետոյ ինչեր է գետին եղերքը և ապառաժ քարի մը վրայ ելած կայնած որն որ զետեղուած է եղեր գետին մեկ կողմը, երկնցուցեր է իւր ձեռքի փայտը Պետրոսին որ ջուրց ալեաց հետ կը մարտնչի եղեր։

Պետրոս գետամոյն վիճակի մէջ կսթափի Սելիմայի աղաղակներէն և վերջապէս կաղատի։

Շինական կանայք որոնք գետը կուգան ջուր առնել. երբ տեսեր են այս դէպքը շուտ մը եկեր և ջանացեր են խելքը գլուխը բերել խեղճ Պետրոսին։

Վերջը Սելիմայ Պետրոսի ձեռքէն բռնած կառաջնորդէ զանի հիւղ, ուր հասնելով Ռիփսիմէ և Յուլիանէ կսարսափին տղուն կերպարանքը ու թրջուած զգեստները տեսնելով. բայց Սելիմայ համառօտաբար կը պատմէ եղելութիւնը և անմիջապէս անկողին կը պատրաստուի։

Տակաւին ես և Յովմաս չը գիտնալով այս դէպքը, իրիկուան երբ կանցնէինք կամուրջէն, բըլրակին վրայ Սելիմայի քոքնոցը տեսանք, և գուշակելով թէ դժբաղդութիւն մը պատահած է խրճիթը, մէկէն սկսանք քայլերնիս կրկնապատկել։

Գետին եզերքը տեսանք քանի մը շինական կանայք որոնք իրարու կըսէին թէ, «խեղճ տղան Ընտուած պահեց. եթէ փայտահարը և այն աղջիկը

հոս չըլլային գեռին ահագին կատաղութեանը զոհ եղած էր հիմայ »։ Ան էկն ալ կըսէր թէ « այն աղջիկը ինչպէս կաշխատէր որ խեղճ տղան ազատէ »։

Այս խօսքերը աւելի հաստատեցին մեր կասկածները, ուստի առանց բերաննիս բանալու կը փութայինք մեր բնակարանը հասնիլ։

Ռիփսիմէ զուարթ դեմքով մեզ դիմաւորեց, և ըսաւ, «Ստուած մեր որդին Պետրոսը դարձեալ մեզ բաշխեց մեր վրայ գթալով,» և կարճ 'ի կարճոյ պատմեց եղելութիւնը։

Հուտ մը ելանք Պետրոսի սենեակը ուր Սելիմայ հիւանդին անկողնոյն քովը նստած կը խնամէր, հոն ստիպեցինք զինքը որ մանրամասնաբար նկարագրէ այս դէպքը։ Յաճ ձայնով Սելիմայ ըսկսաւ պատմել պատահած դէպքը իւր ամէն պարագաներովը, սակայն ծածկեց իր արիութիւնը, որով Պետրոս ազատած էր։

Կամաց կամաց մեր հիւանդը առողջացաւ, և միշտ իւր ազատարարը կը կոչէր զՍելիմայն։

ԳԼ. ԺԱ.

ՊԵՏՐՈՍ ՓԵՔԻՆ ԿԻՋՆԱՑ
ՆԱՒԱՍՏԻՈՒԹԵԱՆ

Ամառուան տաք օրերն էին երբ լերանց բոլոր ստորոտը ընդարձակ ցորենի արտերով ծածկուած էր որոնց մէջէն գեղեցիկ կը բարձրանային խաշխաշի կոչուած ծաղիկները։ Ուռուակին մէկ կողմը պատած էր Հոտաւէտ ծոթրինը, ուր խել մը թեթեռնիկներ փայլուն թեւերով ծաղկէ ծաղիկ կը թռչռտէին։

Այն օրերն էին, կըսեմ, Սելիմայն եկաւ ինձ ըսաւ, «Հայը իմ այսգիշեր երազ մը տեսայ, որ մեր դրացի Ֆոլմասին երազին կը նմանի, և սկսաւ պատմել այսպէս։ Ինձ կը թուէր թէ՝ ես մինակ կը թափառէի առանց Պետրոսի վարդից բլրոցը վրայ, զեփիւռը քաղցրիկ կը փչէր. բայց յանկարծ կապուտակ և պայծառ օդին մէջ ահագնութեան փայլակ մը շողաց.... քանի մը վայրկեան շփոթեալ տարտամ կեցեր էի. երբ կարծես թէ ճակտիս վրայ վարդերու պսակներ բուսան, և իրենց լուսնեղէն թեւին մէջ ամփոփուած յերկինս կը տանէին. ո՛հ ի՜նչ հրճուանք, ի՜նչ զմայլումն կը ծաւալէր հոգւոյս մէջ..... բայց աւա՜ղ, երբոր աչքերս դարձուցի այն մարգագետներուն վրայ, ուր քու և

մօրս ու Պետրոսին ձեռքերը կը գգուէին զիս, ձեր աչքերը արտասուքներով լեցուած էին. և տրտում կը խնդրէին աստեղաց մէջէն Պետրոսին հետքերը, ո՛հ, վերջապէս Պետրոս յանկարծակի աներևութացած էր »:

—Այս տեսած երազդ թեպէտև առաջի անգամ շատ գեղեցիկ էր, բայց ետքի պատմածդ զիս տարակուսանաց մէջ ձգեց, բայց Աստուծոյ ողորմութիւնը անհուն է:

Այս երազը մէկու մը չիմացուցինք, սակայն Սելիմայ տարակուսանաց մէջ ըլլալուն, որպէս թէ Պետրոսի նորէն դժբաղդութիւն մը չի պատահի, իւր սէրը բազմապատկեց անոր վրայ, և երբ Պետրոս գիւղ երթար, Սելիմայ մինչև կամուրջ հետը կերթար, նմանապէս իրիկուններն ալ կը դիմաւորէր զայն կամուրջին վրայ:

Իրիկուն մը Ծովմամ զիս և իւր ամուսինը Հռիփսիմէն կանչեց. և ծառի մը տակ նստած սկսաւ մեզ ըսել:

—Այսօր երբ պանդոկը նստած էի, քարձր հասակաւ նաւապետ մը եկաւ քովս նստաւ. Պետրոս պարտիզին մէջ կը պտտէր. նաւապետը ինձ հարցուց թէ՝ «որո՞ւ է այս տղան»:

—Աստուծոյ ինձ պարգևած որդին է:

—Ի՞նչ գործի կը պարապի. կրկնեց նաւապետը:

—Դեռ գործի մը չի ծառայէր:

—Ուրեմն նաւաստիութեան շատ յարմար կու-

գայ , եթէ կը կամենաս հետս Փեքին տանիմ. և վաղը այս ժամանակ կուգամ. ու պատասխանը կընդունիմ ըսելով, գնաց :

Պետրոս քիչ մը կուահեց , բայց անտարբեր կերպով նստած կը մտածէ ծառին տակ . մտածեցի թէ հոս անոր յարմար գործ չիկայ , թեպէտև երկրագործութիւնը անոր պատրաստ է , բայց իւր ծերութեան ժամանակն ալ կրնայ ընել, արդ դուք ի՞նչպէս կը մտածէք :

— Հա՛ա լաւ , պատասխանեց Հռիփսիմէ , բայց երկու մեծ պատճառներ կան , առաջինը՝ Փեքին ասկէ չորս օր հեռի է , երկրորդ , ի՞նչպէս պիտի բաժնուին Սելիմայէն :

—Ինքը առոյգ երիտասարդ մը ըլլալով ճամբորդութիւն ընելը իրեն զբօսանք մ'է , իսկ Սելիմայէն բաժնուիլը թեպէտ և դժուարին է , բայց հոգ չէ մեր բարեկամ Ա՛ալտ—Պէրժանը կը յորդորէ զայն:

Ասանկով նոյն գիշերը անցուցինք , Հռիփսիմէ գաղտուկ իմացուցեր էր Յուլիանէի :

Հետևեալ օրը նաւապետը եկաւ և հաստատուեցաւ Պետրոսի Փեքին երթալը . ու երէք տարուան ամսականը ամբողջ առնուեցաւ :

Սելիմայ տակաւին չէր գիտեր Պետրոսի բաժանումը , սակայն անոր տարօրինակ տրտում կերպարանքը՝ որ հանդարտութիւն կեղծել կուզէր , կը մատնէր իսկ :

Հասկցաւ Սելիմայ հասկցաւ վերջապէս իրո-

ղութիւնը , բայց չէր համարձակեր արգելք ըլլալ այս մասին , և ծածկել իւր ներքին յուզմունքը՝ ալաւելի դժուարին էր : Ուստի կսպասէր իրաց վախճանին , յուսալով որ Պետրոս իւր սիրուն համար չուզէ հեռանալ այն երկրէն , ուր ծնաւ և սնաւ , այն հիւղէն՝ ուր երկու անմեղներ ապրեցան . վերջապէս այն ծնողքէն որ անխտրաբար կը սիրէին զիրենք , առանց որոնելու իւրաքանչիւրը իւր որդին :

Այս յուսովը չէր խօսէր բնաւ . բայց ահա ամէն բան եղած լմնցած էր . և վերջապէս հասաւ այն ժամը ուր Պետրոս պիտի բաժնուէր մեզմէ :

Պետրոս իւր հօրը և մօրը ու մեր ձեռքերը ջերմ համբոյրներով թրջելով , և իրեն յատկացած օրհնութիւնները ընդունելով գնաց Սելիմայի քով , անոր ձեռքը բռնած և իւր արտասուքներովը զանի ողողելով , " մնաս բարեա՞ք քոյր իմ , գոչեց հեծկըլտալով մը , մնաս բարեա՞ք ,, : Սելիմայ երբ իմացաւ թէ Պետրոս երեք տարիի չափ պիտի բաժնուի , խելքը գլխէն գացած չէր գիտեր ինչ ընելիքը , և զանի իւր գրկին մէջ սեղմելով , կըսէր , « դու որ կերթաս փեքին եղբայր իմ Պետրոս , ալ այսուհետև ո՞վ պիտի ինձ ընկերանայ դասերս սերտելու , միթէ՞ անտառաբնակ բուերը ,, :

— Ըէ՛ . կըսէր Պետրոս արտասուելով . ես դարձեալ քիչ ժամանակէն պիտի վերադառնամ Ստուծով . սակայն զիս մի մոռնար :

—Այս մոռնա՞մ զքեզ, գոչեց Սելիմայ. ի՞նչ-պէս կրնամ ընել այդ բանը. դու չի մոռնաս զիս։

Երբ այսպէս Պետրոս և Սելիմայ փոխադարձաբար իրարու գիրկ ինկած կը խօսակցէին, մը սրտերէն արիւն կը քաշէր։

Վերջապէս նաւապետը եկաւ և Պետրոսի հետ կառքը մտան։ Սելիմայ և մենք մինչև կամուրջին ծայրը գացինք, և կառքը մինչև որ անհրեւութացաւ Սելիմայ գլուխը ծռած, «Եղբա՛յր իմ, եղբա՛յր իմ» կաղաղակէր։ Ահա այսպէս Սելիմայ և Պետրոս իրարմէ բաժնուեցան։

Սելիմայ թեթև հիւանդութեան մը ենթակայ եղաւ, բայց քանի մը շաբաթէն եռքը թէպէտև առողջացաւ, սակայն առջի առողջութիւնը չունէր։

Ամէն երեկոյ երբ խրճիթ վերադառնայի, Սելիմայ զիս քովը առնելով Պետրոսի գործքերը կը պատմէր, և ստէպ կըսէր ինձ թէ՝ «Հայր իմ, ի՞նչպէս ալ տեսած երազս կատարուեցաւ»։

Տակաւին Թոմմաս Հրիսիսիմ և Յուլիանէ չդիտէին Սելիմայի երազը. ուստի Սելիմայ արտասուելով պատմեց տեսած երազը որոնք ևս արտասուաց կաթիլներով կը թրջէին իրենց դէմքը։

Մեծ չէր ըլլար Սելիմայի ուրախութիւնը երբ Պետրոսի վրայ խօսք բացուէր. և ամէն անգամուն չկրնալով ծածկել իւր ներքին յուզմունքը, կուլար և վինովը այս շարադրած ոտանաւորը կըսէր. զոր մենք ալ լսելով կուլայինք։

Թող ալ անողորմ գարկեայք անօրէն
Հանգոյց կենացս կտրեն կրկտեն,
Մարի արևս մտնեմ դերեզման
Սիրուն գեղրոսքս անպոյգ աննման։

Թող եղերգէ գրկելով շիրիմս
Թող զայն արտասուք թրչէ գեղրոսքս,
Երկինք և երկիր համայն բնութիւն
Քանզի զլացան ինձմէ գթութիւն։

ԳԼ. ԺԲ.

ԵԱՐԱԿ ՄԸ

Անցաւ սահեցաւ տարի մը որ մենք մեր զաւ-
կին Պետրոսի վրայ չկրցանք տեղեկութիւն մը ստա-
նալ. զի չէինք գիտեր անոր Փեքինի որ կողմը
բնակիլը։

Սելիմայն նի հարացաւ, զիմաց գոյնը գեղնեցաւ
այն գեղձան մաղերուն խոպոպիքները որոնք ճակ-
տին վրայ հանգչելով իւր գեղեցկութիւնը կը կըրկ-
նապատկէին, հիմայ անոր աչքերը ծածկած էին։

Ինչպէս որ փոթորիկը դաշտին մէջ ոսկեփայլ
ծածանող որայները իւր ահագին կատաղութեանը
տակ կընկճէ, հովը կը մռնչէ փրփրելով, և կայ-
ծակը ժայռեր խորտակելով ահագին քարեր ան-
դնդոց մէջ կը գահավիժէ. իրենց կործանման ա-
տենը ծաղիկները ու հաստաբմատ ծառերն անգամ
խորտակելով և երկիրս տակն ու վրայ կընեն, նմա-
նապէս Սելիմայի սիրտը տակն ու վրայ եղած էր
Պետրոսի մեկնելուն համար։

Միշտ առանձնակի կը թափառէր դժբաղդ և
անմխիթար այն հովիտներուն մէջ, ուր որ Պետ-
րոսի հետ իւր ժամանակները անցուցած էր։

Հատ կը յապաղէր անմռունջ բլրակին վրայ
զոր կոռոգանէր իւր արտասուքներովը, և անդա-
դար պոյտներ կընէր դէպ 'ի այն կամուրջին ծայ-
ը՝ ուր զՊետրոսը հիւրընկալելու յոյսը ունէր։

Օր մ'ալ նոյնպէս Սելիմայ առանցնակի բըլ-
բակին ծառին տակ նստած աղիողորմ ձայնիւ
կարտասուէր , որ բոլոր անտառը արձագանք
կառնուր : Ծ.պտելով գացի քովը նստայ , " որդ-
եա՛կ իմ Սելիմայ ըսի , ալ հերիք ողբաս , խնայէ՛
այդ արտասուացդ " :

Ի խորոց սրտի հառաջելով պատասխանեց թէ՝
" ո՛հ , ի՞նչ գիտի կարենան ընել այս արտասուք-
ները որպէս զի կիսացնելու համար այս մութ և
սոսկալի մտածմունքները որք գիշեր ցերեկ կը տան-
ջեն զիս . թո՛ղ զիս հայր իմ , թո՛ղ որ թափա-
ռիմ այս ընդարձակ և անսահման դաշտերուն մէջ
որ իմ ոտից քայլերուն առջևը կը բացուին : Ամ
այս տրտմութիւնս անդնդախոր վիրապներ կը բա-
նայ ջրոս կողմն : Տէրը ջրոս կողմը սաւառնող է-
ակներու վոնթորկայոյզ յորձանքի մէջ մշտնջենա-
ւոր տագնապաւ կը դատէ ներկայն և ապագայն .
որ իր անմահութեան ծովուն մէջ ահեղ ուրական-
ներու պէս կը թռչին . դու ո՛վ հայր իմ , ինձ վըշ-
տակցելովդ այս համակրութեամբ չեն կրնար թե-
թևնալ իմ վշտերս , բայց ինքը տէրը տարաբաղդ
թող ստեղծէ անդադար նորալոյս գունդեր տեսնե-
լու համար , թող անդադար փշտէ տիեզերաց ա-
հեղ յառաջանքներովը զանոնք օրորելու համար " :

—Դու կը խօսիս ինձ այնպիսի նիւթոց վրայ
որդեա՛կ իմ որ միտքս անդադար կը պաշարեն , օ-
բական աշխատութիւնս և մշտնջենաւոր տրտմու-

թիւն մը կ'ընկճեն հոգիս քեզի համար, և կը զարմանամ որ սէրը կ'զլուսնու այսչափ ոչինչ մը տանջելու։ Սակայն քու ծնողքդ որդեակ իմ էրիկ ճնչիկ կը համբերեն. Մայրդ Յուլիանէ այդանուաք թոռնոց կիր զմայլմանցը պէս կաղօթէ, իսկ Ֆրիփսիմէ կը գգուէ քեզ ահաւոր մտածմունքներդ փարատելու համար, որովհետև ոչ ոք կզգայ քու ներքին տանջանքդ։

—Ո՛հ հա՛յր իմ, կրկնեց դարձեալ Սելիմայ, անբացատրելի մտածմունքներ կը խռնեն բոցախառն սրտիս մէջ երբ ինձ կը խօսուի Պետրոսի վրայօք, կուզեմ ամենակալ մահուան անելուոյթ գահուն վրայ բալմիլ, որ մութ անդունդի մը մէջ կսպասէ ամեն արարածներուն, ո՞ւր էր թէ կարենայի մոռնալ անոր ձեռքին, վասնզի այս է կեանք և ի՞նչու պիտի ապրիմ։

—Ամէն ձեռք չունի որդեակ իմ։ այլ ամեն արարածներուն վրայ կը թագաւորէ։

Ահա այսպէս երբ կը խօսակցէինք, մէյ մ'ալ յանկարծ Ֆրիփսիմէն եկաւ ըսաւ թէ, "օտարական մարդ մը եկեր և կարծեմ զքեզ կը փնտռէ Ալ՝ա՛լա—Պէրժան"։

Իսկոյն Սելիմայի հետ խրճիթ ուղեւորեցանք, որուն սեմացը վրայ նստած էր կարճ հասակաւ մեկը։

Օտարականը երբ տեսաւ զիս, մաղախէն նամակ մը հանեց ու ձեռքս տալով ըսաւ։ « ես կուգամ Զինաստանի փէքին քաղաքէն, այս նամակը ինձ

տուաւ Ֆոլմասեան Պետրոս անուամբ երիտասարդ նաւաստիմը, պատուիրելով թէ՝ այս նամակը իմ ցնոզաց ձեռքը հասցնես, որոնք Ամստերի Լերանց ստորոտը կը բնակին. անոնց վիճակին վրայ աղէկ տեղեկութիւններ ստանաս, մանաւանդ Ելիմայի»:

Ուստի օտարականին հետ խրճիթ մտանք, ու Ֆոլմասի արտէն վերադառնալուն կսպասէինք որ նամակը կարդանք: Այլ սակայն ինչպէս որ սովորական է թէ ամառուան տաք եղանակին մէջ երբեմն անձրևներ տեղի կուտան, նոյն ատենն ալ ըսկսաւ հեղեղի պէս անձրև գալ: Ֆոլմաս որն որ տակաւին արտէն չէր վերադարձած անձրևի ժամանակ փութաց խրճթին դէմը գանուած արտին արտերու պահապաններու համար ծառի ճիւղերէ շինուած հիւղը երթալ մինչև որ անձրևը դադրեցաւ:

Այս միջոցին Յուլիանէ օտարականին նախա-

ճաշիկ մը դրաւ, և Սելիմայ անոր քովը նստած հետաքրքրաբար հարցուփներ կընէր թէ՝ արդեօք դժբաղդութիւնը պատահա՞ծ է Պետրոսի։

Իսկ օտարականը անոր քաջառողջ վիճակի մէջ ըլլալուն կը ջանար համոզել զՍելիմայն թէ՝ «Պետրոս իւր առողջ վիճակի մէջ ըլլալուն ապացոյց այս նամակը և այս ապարանջանը խրկեց ըսելով, զբրպանէն ապարանջանը հանեց և Սելիմայի տուաւ։

Ոյն միջոցին Թոմմաս եկաւ և երբ իմացաւ թէ իւր զաւակէն նամակ եկած է, սկսաւ լալ ու փառք տալ Աստուծոյ, և յետոյ Յուլիանէ ընկնաւ նամակը կարդալ այսպէս։

Գորովագութ և յոյժ սիրեցեալ ծնողք իմ, և հարազատ սրտակցորդ քոյրդ իմ Սելիմայ։

«Ահեծ յաջողութեամբ թէ ցամաքային և թէ» «ծովային ճամբորդութիւննիս զլուխ տանելէն վերջը» «հասանք Ղինաստանի մէկ նաւահանգիստը, նաւա-» «հանգստին մէջ ալ մեծ ընդունելութիւն գտայ տե-» «զացուցմէ, և հոն իմ այն անհիմն կարծիքս մանա-» «ւանդ կասկածս փարատեցաւ որ Ղինաստանցւոց» «վարմունքին և բարուցը վրայ ունեցեր էի. զի» «անոնք հոն վաճառականութեան զբաղած բարե-» «կիրդ մարդիկներ էին։

«Ոն քանի մը օր կմնալէն վերջը դէպ՝ ի Փե-» «քին ուղեւորեցայ սուրհանդակի կառքով, մէկ»

«անձի մը հետ, որուն բարեկամութիւնը նաւին»
«մէջ գրաւելու բարեբաղդութիւնը ունեցայ։ Այս»
«անձը այնպիսի ձիրքի տէր մարդ մ՚է որ չեմ կրը-»
«նար նկարագրել, և որուն հասաատ բարեկամու-»
«թիւնը ու կարեկից ընթացքը կարող եղաւ զիս»
«հիւծող տրտմութենէն սթափելու, ու իմ տը-»
«խուր մտածմունքներս փարատելու։

«Ա՚երջապէս առանց վտանգի քանի մը օրէն»
«փնքին հասանք, ի՞նչ զարմանք, ի՞նչ ապշումն»
«զիս պաշարեցին, երբ այս քաղաքին մեծաշէն և»
«հոյակապ տուները, այլ և այլ շէնքերը, ու պա-»
«լատները իրենց բարձրութեամբը Ա. գրոց մէջ»
«յիշուած Եգիպտոսի բուրքերուն կը նմանէին, »
«և ձեր ինձ պատմած Եւրոպայի քաղաքներուն»
«հարուստ շէնքերուն ալ կը գերազանցէին։

«Փնքինի լայն և երկայն ճամբաները և ա-»
«նոնց մէջ երթևեկող խուռն բազմութեան խառ-»
«նաշփոթ աղաղակները որոնց հնչիւնը դեռ ինձ»
«անծանօթ էին, իմ ականջներս կը խլացուցնէին։

«Իւր ընթարձակութիւնն ալ իւր մեծագործ»
«շէնքերուն համեմատ էր։ Իւր բոլորտիքը եղած»
«ցորենի արտերը ծովուն թեթև հովէ մը յուզեալ»
«մեղմ ալիքներուն նման կը ծածանէին։

«Ա՚յս բոլոր ըստ իս նորանոր տեսարանները»
«այնպէս զիս ապշութեամբ պաշարած էին, ուր»
«այն շփոթութեանը մէջ իմ բարեկամս կորսնցու-»
«նելու դժբաղդութիւնը ունեցայ. խիստ մեծ է-»

«զաւ իմ ախրութիւնս երբ զիս իմ կարեկից բա-»
«ընկաւէս զրկուած տեսայ , իմ խեղճութիւնս կա-»
«տարեալ եղաւ երբ մոլորեալ գառնուկի մը նման»
«աստանդական կը թափառէի , և գիշերն ալ վրայ»
«հասնելով չէի գիտեր ուր երթալս :

«Այն միջոցին ուր յուսահատութեան ա-»
«հարկու ճիրաններուն յաղթական դրօշակին ք՛ո-»
«նարհելու կ՛սկսէի , բոլոր զգայութիւնս կորսըն-»
«ցուցած , աչքերս մթնցած , և դէմքս մահուան»
«երկիւղովը գունատեալ մեծ շուկային երկայն փո-»
«ղոցներուն մէկուն գլուխը պատի մը յենցեալ էի .»
«երբ յանկարծ այս անզգայութենէս սթափեցայ»
«ծանօթ ձայնէ մը որ զիս անունովս կը կոչէր . »
«երբ ետեւս դարձայ՝ իմ բարեկամս տեսայ որ ձե-»
«ռօք նշանացի զիս կը կոչէր , բայց ես քալելու»
«ժամանակ չունէի , վա՜ն զի այսպիսի տեղ մը»
«այսպիսի ատենի մէջ միակ յոյսս կորսնցուցեալս ,»
«մանաւանդ ձեր գորովագութ ծնողացս հ՛սկողու-»
«թեան տակ ունեցած հանգստութեանցս ու վա-»
«յելչած ուրախութեանցս մտածմունքը զիս բոլո-»
«րովին անկարող ըրած էին , և առտուընէ մին-»
«չև երեկոյ ըրած շրջագայութիւններէս բոլոր»
անգամներս թմրած էին :

«Վերջապէս բարեկամս զիս գիշերը անցը-»
«նելու համար սենեակ մը տարաւ . ուր ամեն բան»
«պատրաստ էր իմ միճակս բարւոքելու :

«Մինչև որ նաւաստիութեան ձեռն սմուխ»

«եղայ, ժամանակս վատնելու համար կը քալէի»
«իմ բարեկամիս հետ մէկ ծայրէն միւսը այն կա.»
«մուրջին վրայ, որ Մէյ-Քոնէ գետին վրայ շինուած»
«է։ Ո՛հ, արդեօք քանի՞ հազար անգամ հաւրած»
«եմ այս կամուրջին տախտակները որ ոտքիս տակը»
«ձայն կը հանէին։ Ո՞ւրչափ ստակ ձգած եմ ար.»
«գեօք այն խեղճ կոյրին կոտրտած թիլթեղէ ա.»
«մանին մէջ, որ բոլոր տարի այս կամուրջին վրայ»
«կը պտտի։

«Բայց քանի որ նաւաստիութեան ձեռնար.»
«կեցի գրեթէ ողջ առողջ եմ, բայց ձեր և ալ.»
«նիւ Անլիմայի տեսութենէն կարոտեմ մնացած։

«Այս նամակաբերէս իմ ինչպէս ըլլալս»
«կրնաք իմանալ, ինձ պատահած դժբաղդ պա.»
«տահարը և հիւանդութիւնս։

«Յուսալով որ քիչ ժամանակէն կը վերա.»
«դառնամ ձեր գիրկը։

Ես որում մնամ ցանկացող տես.»
թեանցդ։

Ն. Պետրոս Թովմասեան։

Ի Փէյին

Երբոր Յուլիանէ նամակը կարդաց, ըստիպեցինք օտարականին պատմել Պետրոսի դըժբաղդ պատահարը։ Օտարականը սկսաւ պատմել այսպէս։

«Ձեր որդին ասկէ փնքին տանող նաւապետը նաւուն մէջ հիւանդացաւ, և երբ նաւահանգիստը հասանք մեռաւ։ Պետրոս Ղինաստանի

մէջ մէկը չի ճանչնալուն համար բաց 'ի ինձմէ , իմ քովս էր ապաստանուած մինչև որ ես զայն նաւաստիութեան ձեռնարկեցի :

Ամէն ժամանակ Պետրոսի հետ մեր պարապոյ ժամերնիս կանցունէինք կամուրջին վրայ , և արևուն կիզիչ ճառագայթներէն ազատելու համար կերթայինք այն բարձր աշտարակին պատուհաններուն առջևը զոր գետին ձախ կողմը կառուցուած է գետէն ներս մտնող վաճառական նաւերուն ներս մղուած ժամանակնին նշանով մը ազդ ընելու համար :

Զինաստանի տեսակ մը նաւերը * որոնք սովորաբար արմտիք կը բերեն , ամէն ձմեռ կամուրջէն ներս գտնուած նաւատորմիղը կապաստանին :

Ամեն գեղեցիկ օրերէն մէկն էր , երբ կամուրջին վրայ գտնուած կաթնավաճառին խանութէն կաթ կը գնէինք , աշտարակին պահապանը նշան տուաւ կամուրջը բացուելու որպէս թէ նաւերը ներս պիտի մտնէին :

Կամուրջը բացուեցաւ որուն մէկ մասին վրայ ես կեցած էի :

Պետրոս՝ որ կամուրջին բացուած մասին վրայ էր կեցած , ուրիշներուն պէս աճապարեց ինքն ալ միւս կողմը անցնիլ , բայց դժբաղդաբար գետը ինկաւ և յատակը գնաց :

---

* Զինաստանի տեսակ մը նաւերը պարաններով կապուած են :

Կամուրջին վրայ գտնուած ամբոխը սկսաւ աղաղակել թէ՝ «Նաւերը ներս չի մտնեն, վասնզի գետը մարդ ինկաւ։» Իսկ նաւապետները չի կըրցին նաւերուն զօրութիւնը մէկէն 'ի մէկ զսպել. ուստի և անցան գացին։

Յետոյ ջանաց բոլոր բազմութիւնը գետը մարդ իջեցնել և ազատել զՊետրոս, բայց իրենց ճիգը պարապը ելաւ երբ քանի մը նաւաստիներ ծովը նետուեցան, սակայն Պետրոս առանց մէկու մը օգնութեամբը ջուրին երեսը ելաւ։ Կամուրջին վանդակասիւններէն մէկը բռնեց, ու քանի մը հոգւոյ օգնութեամբը վեր ելաւ ու կիսամեռ ինկաւ։

Ծերպէտև առաջի անգամ վախցայ թէ գետին յատակը ժայռեր գտնուելով Պետրոսի վնաս մը հասցուցած են, բայց յետոյ իմացայ թէ աւազուտ տեղ մ'է եղեր *Ովկիանոսի յատակին պէս։

Վերջապէս կամուրջին վրայ գտնուողներէն ազնուական մէկը իմ հետս խրկեց Պետրոսը իւր բնակարանը և հրամայեց որ բժիշկը կանչուի։

Ան Պետրոս բոլորովին ինքզինքը կորսնցուցած անկողնոյ մէջ ինկաւ, ու բժշկին հրամանացը համեմատ զիս հիւանդին քովը թողուցին որ անոր ամէն պիտոյքը հոգամ։

Կամաց կամաց սկսաւ Պետրոս իւր առողջութիւնը գտնել, և երբ աղէկ մը առողջացաւ, ու-

* Ատոր պէղէկոնիանը Պոպոնիանս վերջերը գրուած է։

զեց ձեր քովը վերադառնալ, բայց իւր բարերարը զինքը չի թողուց համոզելով որ, «պարտաւոր եմ զքեզ գործի մը ձեռնարկել, և թէ քու տեղդ բարեկամդ թող երթայ ծնողացդ որ կրնայ լեզուաւ իմացնել քու ի՞նչ վիճակի մէջ, ո՞ւր և որո՞ւ քով ըլլալդ. այլ դու անոր հաւատարիմ ըլլալուն համար նամակ մը տուր։»

Այս ըսաւ և զիս ճամբեց որ հոս գամ ձեր որպիսութիւնը իմանալու և դարձեալ երթամ պէքին։» Օտարականը քանի մը օր սպասելէն վերջը ճամբայ ելաւ, անոր իմացուցինք մեր որպիսութիւնը և անցուցած ժամանակնիս Պետրոս քանի որ մեզմէ բաժնուէր էր։ Սելիմայ՝ որ Պետրոսի վրայօք լսած պատմութիւններէն շատ խռոված էր, թախանձանօք աղաչեց Օտարականին որ «Պետրոս ալ վերադառնայ իւր ծնողաց գիրկը, հերիք սեպելով այսչափ ատեն անոնց քովէն հեռանալը, որք գիշեր և ցերեկ կարոտասուեն իրեն համար։» Եւ ինչպէս որ Պետրոսի ճամբորդութեան ժամանակը մինչև կաուրջին ծայրը գացած էր, նոյնպէս և Օտարականին հետ ալ մինչև կամուրջ երթալով, ճամբեց։

ԳԼ. ԺԳ.

ՍԵԼԻՄԱՅԻ ՀԻԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Տարւոյն գեղեցիկ եղանակին մէկը Աշունը մօտեցած էր։ Այս գեղեցիկ եղանակին մէջ եղեռամէ զարնուած տերևները կ'սկսին վար թափիլ կաղամախի և թաւշենիի ծառերէն։

Արևելեան գաղջ հովը այս երկրային փոփոխութիւնը կաւելէր երբ արևը երկնից երեսը բարձրանայր։ Երկինքը գրեթէ իւր գեղեցկութիւնը կըզգենոյր։

Աստղերի լեռները անհուն երկինքի մը մէջ կընկղմէին։

Մեզի համար բոլոր ժամերը երկայն էին. զի Պետրոսի վերադարձին տակաւին շատ ժամանակ ունենալնէս 'ի զատ, Սելիմայի անձնական տխրութեանը համաձայնած էինք։ Մինչև դրեր էի այնուհետև բոլորովին Պետրոսը անձնատուր չընել հեռացնել Սելիմայէն ամէն կերպ մարդկային այն ընկերութիւններէն, որոնք կրնային զՍելիմայն Պետրոսէն բաժնել։

Թոմմաս, ճիշդ իմ տրամադրութեանցս մէջ գտեր էի. կենաց դառնութենէն ծերացած, հանճար անծանօթ իր անձին, ամփոփուած սիրտ,

սպիտակահեր ու ալևոր, և Սելիմայի համար մը-տածմունքէն յոգնած մարմին մ՚էր։

Մինչդեռ իմ և բարի դրացւոյս ընտանիքը այս կերպ մտածմունքներով պաշարուած էին, և Սելիմայ՝ որ օտարականէն Պետրոսի համար լսած պատմութիւններէն վրդովուած ոչ սեղան կիջնէր և ոչ կը խօսէր, այլ միայն անտառները կը թափառէր, ալ բոլորովին ուժէ ինկած հիւանդութեան անկողնոյն ողջունեց։ Մեր ամէն խառնաշփոթ մտածմունքները կրկնապատկուեցան, ալ Պետրոսը բոլորովին մոռցած էինք և Սելիմայի հոգը կը կրէինք։

Ուստի ուզեցի զայն փոխադրել Մակոյ գիւղին հիւանդանոցը որն որ ասկէց երկու փարսախ հեռու կի՛նայ։

Առտու մը կանուխ ելայ անկողնէս և գացի վերոյիշեալ գիւղը, հոն գտնուած ծերունի բժշկին տունէն բարեսրտութեամբ ընդունուեցայ, և բժշկին իմացուցի Սելիմայի հիւանդութիւնը։

Ծերունի բժշկին յորդորանօքը որոշեցինք Սելիմայն հիւանդանոցը փոխադրել։ Ասկոյն խըրճիթ վերադառնալով ծառի ճիւղերէ պատգարակ մը հիւսեցի յորում Սելիմայն հանգչեցնելով Ռոմմասի հետ ծերունի բժիշկին տունը տարինք։

Այս առանձնակեաց բարի ծեր բժիշկին տունը նեղ ճամբով մը միայն գիւղին կը կցուէր։ Տունը եռևի կողմը գեղեցիկ ծաղկազարդ պարտեզի մը

վրայ կը նայէր։ Տանը դիմացը զառիվայր մարգա-
գետիններ, երկայնաբան վայրի շագանակի ծառե-
ու անտառներ կային ուրկէ խել մը առուներ ի-
րենց ջուրերը կը հոսեցնէին. և այս տեղուանքս ալ
մարդ ապահով էր թէ միայն ոչխարաց երամակ-
ներու պիտի պատահի։

Ներուանի բժիշկը Սելիմայի փոքրիկ սենեակ
մը տուաւ որուն պատուհանները պարտեզին և
դաշտին վրայ կը նայէին։ Լսկ միւս սենեակները
ամէնքն ալ հիւանդներով լեցուն էին։

Թէպէտև մենք կարեկցութիւն մը կ'զգայինք
Սելիմայի վրայ որ Պետրոսի պէս մեզմէ հեռացած
էր, օտար երկրի մը մէջ հիւանդ էր, վասն զի հոն-
իւր բժշկութիւնը պիտի գտնէր. տխուր ալ էր ան-
շուշտ. որովհետև իւր ծնողացմէն հեռացած էր.
բայց մենք զինքը տեսնելու չէինք բաղձար, որքան-
որ իւր շուրջը գտնուողները կը հիանային իրեն շը-
նորհալի կերպին և գեղեցկութեանը վրայով։

Ինութեամբ երկչոտ ու զգուշացող ըլլալով
չունէր բնաւ այն անձնական վստահութիւնը որ
շատ մարդիկ կը խրախուսէ դիպուածական ընտա-
նութիւններ ընել, ոչ տեսնել կուզէր և ոչ տես-
նուիլ։

Ահա այսպէս սահեցան ցմեռուան երջանկա-
ւէտ ամիսներն ու օրերը, առանց մեր մտաց տպա-
ւորութենէն զատ բանով մը։

Գարունն՝ ալ եկեր հասեր էր։ Ապտերի

լեռները տերևոց կանանչ շուքովն և կաղնիներու հոտաւետ ձիւնովը անձնող ճամբորդները կը ծածկէին : Խրճթին վերի յարկէն կը տեսնէինք Մակոյի բլուրներուն ծածանեալ կանանչագեղ երկար գծերը։ Ասոնք հինգ ամիս մեր մոռցած բնութեան յիշատակներն ու ծարաւութիւններն էին : Սելիմայի սրտին կը զրկէին խայթիչ մտածմունքներ ու յանդիմանութիւններ : Խրիկունը լուսինը անտառաց գագաթներու վրայ իր լուսեղէն ցայտերովը կը ծփեր : Մոտախոհ աստղը Ասդալեան գետին դաշտին ծայրէն կը բանար լուսաւոր անցքեր :

Սելիմայի մտաց խորհուրդները ծաղկանց անոյշ հոտերուն ու նկարներուն ազդեցութեամբը բնականապէս զայն նորէն կը տանէին դէպ 'ի այն բնութիւնը որուն գիրկը երջանիկ պիտի ըլլար :

Դէպեռև ձմեռը շաբաթը երկու անգամ ես և Դոմմաս անոր այցելութեան կերթայինք , սակայն տակաւին Հռիփսիմէ և Յուլիանէ չէին տեսած զայն :

ԳԼ. ԺԴ.

ՍԵԼԻՄԱՅ ԽՐԺԻԹ ԿԸ ՓՈԽԱԴՐՈՒԻ

Առաւ մը Հռիփսիմէ և Յուլիանէ ուղեցին այցելութեան երթալ Սելիմայի :

Աստի Յուլիանէ ծաղկէ փունջ մը հիւսեց և

վինը անոր մէջը դրաւ։ Հռիփսիմէ ալ Պետրոսի ղրրկեալ ապարանջանը առաւ և սկսանք երթալ Մակոյ գիւղը։ Երբոր ծերունի բժշկին տունը մտանք ուղղակի գացինք Սելիմայի սենեակը, որուն դրանը նիզը դրուած և Սելիմայ ալ այսպէս կ'ըսէր ինքն իրեն։

«Ը՜հա նորէն կարթննամ խառն 'ի խուռն երազներով միտքս շուարեցնող քունէն։ ո՛հ, նորէն արտասուք հոսեցնելու համար է որ աչքերս կը բացուին այս առաւօտ։ Ամենայն ամէն օր այս ժամանակ կարթննամ վշտացս հետ և մեկտեղելով կը խօսակցինք։

Ա՜լ ի՞նչ փոյթ ինձ։ Ես իմ վերջին օրերուս կը մօտենամ, գերեզմանը չի կրնար ուշանալ ինձ համար բացուելու։ Մինչև այս ատեն միակ ապրեցայ, կարծես թէ զբաղելով . . . . . որ իմ կեանքս մաշեցուց։

Կը հասնիմ կենացս վախճանին և ցաւով սրտի կը տեսնեմ որ պատճառը իմ ծնողքս եղաւ։

Ա՜լ կարելի՞է արդեօք ետ դառնալ ու նորէն երջանկութեան ճամբան ձեռք առնուլ, փոխանակ այն ճամբուն զոր դժբաղդաբար ընտրեր եմ։ Ես սէրը չէի ճանչնար, իմ վրաս բոլոր ընտանեկան սէրերուն միայն պարապութիւնը կը տեսնէի. ինձ քաղցր կը թուէր այս սէրը գտնելու այնպիսի մէկու մը քով որուն սիրտը այսպիսի վեհանձնութեամբ զիս որդեգրեր էր։»

Երբոր Սելիմայ այսպէս կը խօսէր՝, և մինք որ դրանը սեմոցը տակ նստած անձայն մտիկ կընէինք, յանկարծ ծառայի մը սանդուխէն վեր ելած ժամանակը ըրած աղմուկէն Սելիմայ շփոթելով, «ո՞վ կայ դուրսը, » պոռաց :

Յովմաս դուռը բանալով ներս մտաւ, Սելիմայ սկսաւ ըսել, « եկո՛ բարեկամ, եկո՛, քեզի թոյլտուութիւն կայ, վասն զի զքեզ և իմ հայրս կը գտնեմ զիս սիրող, մայրս և բարեկամուհիս ինչո՞ւ իրենց Սելիմային այցելութեան չեն գար : »

Յուլիանէ և Հռիփսիմէ երբ լսեցին այս խօսքերը, մէկէն ներս վազեցին և Սելիմայի հետ սիրոյ համբոյրներ իրարու տուին, առանց բառ մը արտասանելու, իբր թէ ներողութիւն կը խնդրէին Սելիմայէն :

Նոյն օրը ուրախութեամբ անցուցինք, և երբ երեկոյ եղաւ ուզեցինք խրճիթ վերադառնալ, բայց Սելիմայ թախանձանօք աղաչեց որ նոյն գիշերը հոն անցունենք :

Ուստի նոյն գիշերը ճաշերնիս ըրինք, և լուսնոյ լուսովը սկսանք պտտիլ մարգագետնին մէջ :

Գիշերային այն գորտերը որք պարտեզներուն և սովորաբար մարգագետներուն մէջ ոստոստելով կը ճարակին, երբ Սելիմայ տեսնար զանոնք այսպէս կըսէր :

—Ո՞վ գորտեր, դուք որ ձեր կենցաղուն օրերը այսպէս զուարճութեամբ կանցնէք, ձեր սիրելի-

ներուն բազկացը տակ կը հանգչիք իրենց բոյներուն մէջ, իսկ ես իմ սիրելիներէս զուրկ ըլլալէս զատ, գիշերը մայրենի բոյնիս մէջ չեմ անցներ, այլ օտար բոյնի մը մէջ, որ որչափ փափուկ ըլլայ դարձեալ ինձ համար ապառաժ քարերու և խոչնդոտներու վրայ պառկիլ է։ »

Հետևեալ առաւօտ ուղեւորեցանք խրճիթ առանց Եղիսմայն հետ տանելու, հապա խօստացանք քիչ ժամանակէն խրճիթ փոխադրել։

Ամառուան տաք եղանակին մէջ ըլլալով, և յուսալով որ ալ Պետրոս կը վերադառնայ փեքինէն, որոշեցինք խրճիթ փոխադրել զԵղիսմայն։

Ա՝ասնորոյ Թովմասի հետ գացինք Եղիսմայի սենեակը որուն դուռը ամէն ատենուան պէս փակուած էր, հոն քիչ մը ժամանակ սպասեցինք ու յետոյ կամաց մը դուռը բացինք և տեսանք որ կը քնանար։

Պետնին վրայ ծունկ չոգեցանք ձեռքերնիս անկողնոյն վրայ դրինք և աչքերնիս անդադար անոր դէմքը կը դիտէին։ Երկար ատեն սրտանց և արտասուք թափելով աղօթք ըրինք. երբոր աղօթքնիս լմնցուցինք աչքերնիս ողողած էին, ծածկեցինք երեսնիս անոր երեսէն որուն արթննալը այնչափ մոլեգին սիրով կը խնդրէին։

Ձեռքերս աչքերուն վրայէն անցուցած ատենս մէկէն 'ի մէկ զգացի որ ձեռքը իմ ձեռացս կը դպչէր ու թոյլ կերպիւ գլխուն վրայ կը տանէր, կը

կարծէր թէ Պետրոսը եսեմ, և կուզէր որ ճակտին վրայի մաղերը մէկդի տանիմ։

Ը.ղաղակ մը ձգեցի և դիտեցի որ աչքերը բացուեցան, բերանը շունչ կառնոյր, երեսը կը խնդար, և որոշ կերպիւ լսեցի այս խօսքերը, «ո՞վ Աստուած իմ, շնորհակալ եմ։»

Ը.ռաւօտեան զովութիւնը զինքը սթափեցուցեր էր մինչդեռ մենք աղօթքի պարապած էինք, երեսը արտասուքներու մէջ ողողեր էր անկողնոյն եզերքին վրայ։

«Ո՞վ Աստուած իմ, ըսաւ, դարձեալ, շնորհակալ եմ, և դուք ծնողք իմ ներեցէ՛ք ինձ, և թէ ի՞նչ պատճառաւ հոս եկած էք կանուխ։»

—Օ.քեզ խրճիթ տանելու համար, պատասխանեց Ի.ովմաս։ Հանդարտ կերպով մը։

—Խրճի՞թ, ըսաւ զարմացմամբ, խրճի՞թ։

—Ը.յո՛, յարեց Ի.ովմաս, և թէ քիչ ժամանակէն ալ Պետրոս պիտի վերադառնայ։

Ուստի սկսանք խօսակցելով երթալ խրճիթ, Ը.ռիւիսիմէ և Յուլիանէ որոնք կամուրջին ծայրը կ'սպասէին. դիմաւորեցին զՅելիմայն և խրճիթ տարին։

ԳԼ. ԺԵ.

ՄԱՀ ՍԵԼԻՄԱՅԻ

ԵՒ

ՎԵՐԱԴԱՐՁ ՊԵՏՐՈՍԻ

Այս կերպով անցուցինք երէք տարուան ամիսներն ու օրերը, առանց Պետրոսի վրայ տեղեկութիւն մը ստանալու բաց 'ի այն նամակէն զոր երկու տարի առաջ մեզ ղրկած էր :

Թոմմաս առանց գաւազանի չէր կրնար պըտտիլ, վասն զի գեղեցիկ և սիրելի ծերութիւն մը ստացած էր որով մահուան դուռը պիտի երթար :

Ընոր կապոյտ աչքերը ունէին քաղցր, բայց գործածուած տեսութեան թափանցող նայուածքը:

Իւր հասակէն ճերմկցած մազերը կարապ թռչնոյ աղուամազի կակղութիւնը ունէին :

Ձեռքերը նիհար ու ճերմակ էին, արձանի մը մարմարիոնէ ձեռքերուն պէս :

Ընթանը հատած ըլլալով, քանի մը կապոյտ երակներ միայն կը սողային քունքերուն վրայ :

Եւ եթէ խօսիլ սկսէր, երկար լռութեամբ

այն խօսքերը կ՚ընդհատէր , որպէս թէ Սելիմայի ա-
ռանձնացը մէջ թափանցելու ժամանակ տայ . և ը-
սածներուն համը առնէ , մտօք այս խօսքերը իր
համեմէր միշտ շնորհալի հրճուանօք :

Իսկ Սելիմայ , ամէն ժամանակ և ամէն գիշեր
կը շարունակէր երթալ կամուրջին կամ գետե-
զերքին վրայ , փոփոխակի շրջագայելով կամ կանգ-
նելով և պարապ տեղն սպասելով որ Պետրոսը
տեսնէր և իրեն տար այն անձայն կոչոյ նշանը որ
մէջերնին դրած էին ։

Պետին քանի՞ ծոյլ ալիքներուն ետևէն չէր
նայած իրենց խուսափելու ատե՛ր որոնք կամուրջին
կամարին տակէն կը տանէին լուսնոյ ծփեալ ադօտ
լուսերը ։

Ա՛հ , այս ժամերը որոնք իրեն համար ուշ կը
սահէին , ո՞րչափ կը նզովէր զանոնք իրենց դան-
դաղութեանը համար , կամ բողոքելով իրենց
շտապելուն համար ։ Ա՜հ , արդեօք կա՞ն երջանիկ
և հանգստեան օրեր կը պօռար , և յետոյ ալ ճա-
ը հատած կը վերադառնար խրճիթ ուր կիսամեռ
կի ինար ։

Մեպէտև կը գուշակէի թէ նորէն հիւան-
դութեան մը ենթակայ պիտի ըլլայ Սելիմայն ։
բայց ինչ օգուտ , ուստի յոյսերնիս Աստուծոյ
յանձնած իրաց վախճանին կ՚սպասէինք ։

Երիկուն մը Սելիմայ կամուրջին ծայրը գա-
ցած էր և սովորականէն աւելի ուշացաւ ։

Ուստի պարտաւորեցայ երթալ փնտռել Սելիմայն, բայց որ կողմը որ գացի չէի կրցայ գտնել, կը թափառէի անտառները բարձրաձայն իր անունը տալով, սակայն արձագանքներէ զատ ուրիշ ձայն մը չէի լսեր։ Գիշերը բաւական ժամանակ անցեր էր որ ես յուսահատ դարձայ խրճիթ, բայց չէ կրցայ քնանալ մինչև որ ագլորները սկսան միաձայն երգել։ Ա՞երջապէս յոգնած ըլլալուս ծնօտս պատին կրթնցուցած ձեռքերս ծնգացս վրայ իրարու անցուցած քնացայ։ Երբոր արթնցայ արդէն արևը երկնից երեսը լաւ մը բարձրացած ըլլալով լուսաւոր անդրադարձներ բոլոր անտառը կը լեցնէր. քաղցրաձայն թռչնիկները ծառէ ծառ կոստոատէին և կաղնոյ տերևները կը կտցէին։

Գոշիով ու ծովուն փրփուրովը աղտոտած հանդերձս փոխեցի, արթուն կենալէ յոգնած ու կարմրած աչքերս լուացի, գաւազանս առի և սկսայ մոլորեալ գառնուկիս պէս զոր ժամանակաւ կորուսած էի, փնտռել Սելիմայն, բայց չը գիտէի թէ ճակատագիրը ի՞նչ որոշած էր։

Ուղղակի Նորոյ գիւղը գացի, յուսալով որ Սելիմայ իւր ընկերուհւոյն տունը գացած է, որուն հաստատ բարեկամութիւնը բժշկին տունը գրաւած էր։ Բայց 'ի զո՞ւր, ուստի յուսահատ փութացի խրճիթ վերադառնալ, և կը յուսայի թէ Սելիմայն խրճիթը կը գտնեմ։

Երբ խրճթին մօտեցայ տեսայ Պետրոսը խըր-

ձիթին դրանը առջև իւր մօրը Հռիփսիմէի հետ գըրկախառնեալ, և ուղղակի խրճիթ մտայ : Անոն մեր դէմքերը ուրախութեան արցունքներով կը թրջուէին Պետրոսի յանակնկալս իւր ծնողաց գիրկը վերադառնալուն համար . բայց Սելիմայ դարձեալ խրճիթը չէր :

Ստէպ ստէպ Պետրոս Սելիմայն կը հարցնէր թէ արդեօք դժբաղդութիւն մը պատահա՞ծ է անոր :

—Իսկ ես կը համոզէի թէ քիչ մը անձնական տկարութիւն ունենալուն համար ծերունի բժշկին տունն է, և ահա կերթամ զայն բերել : Ամ ըսի և խրճթէն մեկնեցայ, բայց չէի գիտեր անոր ուր ըլլալը : Ծերունի բժշկին տունը գացի բոլոր Մակոյի բլուրները և անտառները փնտռեցի բայց չի կրցայ գտնել, յուսահատութիւնը զիս պատեց թէ արդեօք գե՞տը ինկած է : Բոլոր օրը այսպէս անցուցի և առանց խրճիթ վերադառնալու ուզեցի պանդոկ ուղեւորիլ : Լեռան մը տակ քանի մը վրանաբնակ Զինաստանցիներ տեսայ որք իրենց ընտանեօքը ամառը անցնելու համար այն կողմերը կուգան : Անոնց տղաքը վրանին առջևը ծառի կտորուանք կը վառէին, մօտեցայ անոնց և Սելիմայն հարցուցի : Անոնցմէ մէկը սկսաւ այսպէս ըսել :

«Երէկ գիշեր մեր վրանը աղջիկ մը եկաւ որ շատ գեղեցիկ ձայն մ՝ունէր, ու մեզի հետ կերակրելէն ետքը դիմացի անտառը մտաւ, քանի մը ժամ անցնելէն վերջը հեռուէն ականջնուս վիրա-

ուրեալի մը ձայնը եկաւ որ օգնութիւն կը կանչէր։ Հայրս ատրճանակը առաւ և մենք ալ կաղամախի ծառերէն ջահ մը վառեցինք և անտառը մտանք, սակայն մարդ չի տեսանք։ Երբոր յուսահատ կը վերադառնայինք ձայնը մօտ տեղէ մը նորէն լսելնուս պէս հոն ուղեւորեցանք։

«Փոսի մը մէջ արիւնաթախ մէկը տեսանք, սակայն ով ըլլալը չէինք գիտեր։ Մենք փոսին բերանը կեցանք ու Հայրս վար իջաւ, և երբ վիրաւորեալը վեր առաւ, տեսանք որ առջի իրիկուան մեր վրանը եկող աղջիկն է որ ճամբէն շուարեր և խոչնդոտներով լի փոսը ինկեր է։ Խեղճ աղջիկան դէմքէն մահուան ցուրտ քրտինքը կ'իջնար։ Ուստի Հայրս գիշերը հոն կեցաւ և հիմա ալ գիւղ գնաց անոր ծնողքը գտնելու։»

Երբոր այս խօսքերը լսեցի աղաչեցի անոնց որպէս զի այն աղջիկան ուր ըլլալը ինձ իմացնեն։

Իսկոյն Ճնաղանդեցան ինձ որոնց հետ մտանք անտառը։ Այրի շագանակի ծառի մը տակ տեսայ վիրաւորեալը որ Սելիմայ էր։

—Ա՞վ Աստուած իմ, գոչեցի։

Սելիմայ սթափեցաւ աղաղակէս. աչաց լոյսը մարելով թալացեալ Հայիլ սկսած, երեսը արիւնմարելով գունատեալ, «Հա՛յր իմ, ըսաւ խեղճուկ ձայնով գունատեալ, աւասիկ կեանքս Պետրոսի համար կը զընով մը, աւասիկ կեանքս Պետրոսի համար կը զըրաւեմ, անոր համար մեռնիլս իրեն իմացնես, և իմ գերեզմանս ծաղկներով ծածկես որպէս զի ան-

ցորդները իմ գերեզմանիս ծաղիկները իրենց աբ-
տասւօքը թառամեցնեն վասն զի ես Պետրոսի հա-
մար թառամեցայ » : Այս ըսաւ և իւր շուրջը գըտ-
նուողներուն վրայ նայուածք մը ձգելով հոգին ա-
ւանդեց :

—Ո՞վ ճանապարհորդ, անգութ Մահը իմ ծա-
ռիս նախանձելով իր ուտիճը խրկեց որ իմ մէկ հա-
տիկ վարդս թառամեցուց : Ո՛հ, այս աշխարհիս
բարութիւնները որչափ խաբեբայ են , թէորք
քիչ մը հանգստութիւն տայ անոր ետևէն գա-
ւաթներով լեզի պատրաստած է խմցնելու :

Այն ծառին տակը ուր Սելիմայ հոգին ա-
ւանդեց, հոն ի՞նչ կրնայի ընել, որո՞ւ աղաչէի ,
եթէ վրանաբնակ Զինաստանցւոց իմացունէի , կայ-
րէին : Ալ ճարս հատած գիշեր ատեն զայն գըր-
կեցի և խրճթին քովերը բերի , հեծկլտուքս
բռնի կը խեղդէի որպէս զի խրճիթէն չիմանան ,
ծառի մը տակ գերեզման մը փորեցի ձեռքերս ու
ոտքերս դողալով. կարծես թէ զայն մեռցնողը ես
եմ , վերջին համբոյրս անոր արիւնոտ դէմքին վը-
րայ դրոշմելով՝ հողը վրան լեցնելով գողի պէս
փախայ քովէն և մտայ անտառը նոյն գիշերը ան-
ցունելու : Հետևեալ առաւօտ ծաղիկներ ժողվե-
լով անոր գերեզմանը ծածկեցի ու խրճիթ ուղևո-
րեցայ , հոն եղելութիւնը պատմեցի որք գիշեր և
ցերեկ կ՝արտասուէին :

ԳԼ. ԺԶ.

ՎԵՐՋԱՒԱՆ

Երկու հիւղերը երբեմն ողբոց արձագանքներով և երբեմն խորին լռութեամբ կը լեցուէին։

Եթէ մարդ իւր մեռնիլը մտածէ կ՚սկսի երկչոտիլ, և եթէ աչքը մահու բնակարանին խորունկութեանը վրայ դարձնէ, վախնալով ետ կը քաշուի։ Պետրոս ալ նմանապէս երբեմն ինքզինքը մեռցնելու փորձ կը փորձէր բարձր տեղերէ վար իյնալով, երբեմն Սելիմայի գերեզմանին այցելութեան կերթար և երբեմն խոզարածի պէս լեռները կը թափառէր, ու երբ վիրաւորուած ըլլար խրճիթ կը վերադառնար ուր կիսամեռ կիյնար։

Ձմեռուան եղանակին մէջ էինք։ Պետրոս ամէն առաւօտ գերեզմանին ճիւները կը մաքրէր, հոն իւր սովորական կոծը շարունակելով։

Դանի մը օր Պետրոս չերևաց, ուստի պարտաւորեցայ զինքը փնտռել. բայց չի կրցայ անտառէն դուրս ելլել. վասն զի ճիւնը բոլոր ճամբաները անյայտ ըրած էր, և ցուրտ քամի մը փչելուն համար փութացի խրճիթ վերադառնալ։

Երբ գերեզմանին մօտեցայ, որուն գերեզմանը ըլլալը ծառէն յայտնի էր, հոն կանգ առի քիչ մը

ատեն, և ցուրտին չի դիմանալով քայլերս կը կրկնապատկէի. ճամբան ձիւնին վրայ արեան կաթիլներ տեսայ, դողդղալով աչքերս խոնարհեցուցած արեան հետքերը դիտելով կերթայի որոնք հետզհետէ կը շատնային։ Յանկարծ տեսայ որ Պետրոս ձիւնին տակ արիւնաթաթախ սառած էր։

«Ո՞վ Աստուած իմ,» գոչեցի։ Նկէք լեռներու անտառները, իւր արեանը ծարաւողջ եղեռնագործին մարմինը թաղեցէք, բայց և ոչ մին ինձ կը պատասխանէր։ Ո՞վ ճակատագիր, միթէ այս երկու անմեղաց մարմինները գերեզման իջեցնելու ծառայութիւնը տարաբաղդ հո՞ր մը ձգած ես։

Ձեռքերս ոտքերս սառած, արտասուքը դիմացս վրայ ցամքած գերեզմանը կը պատրաստէի, մերթ ձիւնին վրայ կը գլտոր էի մերթ ցուրտին չի դիմանալով կանկ կառնէի, և երբ լմնցայ, զայն գերեզմանը դրի անոր արիւնոտ ճակտին ալ համբոյր մը դրոշմելով, ձիւնով և հողով գերեզմանը ծածկեցի։ Երբ խրճիթ հասայ՝ ռիփսիմէ և Յուլիանէ զիս վառարանին քով տարին ուր բոցը կը ճարճատէր, հոն եղելութիւնը չի պատմեցի և մին չև այս օր չեն գիտեր Պետրոսի մահը, հապա գիտեն որ նա նորէն փեքին գացած է։

Գերեզմանները ծաղիկներով կը ծածկեմ.
Չի գիտեմ ես ե՞րբ գերեզման պիտի իջնեմ։

«Ներուն այս երկար պատմութիւնը ինձ

քսաւ և յուեց , ու թոյլ տուաւ արտասուաց որ բռնութեամբ հոսելով իւր դէմքը ողողեն :

Երիտասարդ օտարականիս սիրտը որ ապերջանիկ ծերունւոյն ըսածներէն խոր սրտաշարժ տրպաւորութիւն մը ըրած էին , « Այն Աստուածը , ըսի , որ տառապելոց Աստուածն է , քեզ ու քու ամուսինդ ձեռք է չի թողուր : Անիկայ շատ անգամ թշուառութիւնը կը ղրկէ որպէս զի անկէ ետքը շնորհելիք երջանկութիւնը մեզ աւելի զգալի ընէ . մխիթարուէ՛ , յուսա՛ առ Աստուած և անիկայ պիտի գթայ : Այս և ասոր նման շատ մը խօսքերով տարաբաղդ ծերունւոյն սիրտը սփոփելէ վերջը հեռացայ անկէ անոր բարի օրեր և ժամանակներ մաղթելով , և սկսայ դարձեալ իմ ճամբորդութիւնս շարունակել :

ՎԵՐՋ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՑԱՏԱԿԸ

Երջին և նորագոյն քննութիւնները ցուցուցած են որ Ովկիանոսի յատակը՝ փոխանակ լոկ ժայռ կամ կարծր կաւ ըլլալու, ինչպէս մինչև ցարդ կը կարծուէր, ջուրերու եզերքը գտնուող քարերու վրայ բուսնող մամռոյ նման կակուղ նիւթով մը ծածկուած է։ Այս նիւթը հասարակ կակուղ կաւի կը նմանի, բայց երբ մանրացուցով քննուի, բաղկացած կ'երևի խեցեմորթներու պատեաններէ, որք այնչափ մանր են որ առանց մանրացուցի չեն կրնար աչքը զանազանուիլ։ Այս պատեաններուն մէջ բնակող ամենափոքր կենդանիները հաւանականաբար Ովկիանոսին երեսը կ'ապրէին, վասն զի մինակ հոն կրնային գտնել ան լոյսն ու ջերմութիւնը որ կենդանեաց և տնկոց հարկաւոր են։ Բայց անոնք իրենց կարճ կեանքն աւարտելէն ետքը՝ անոնց մանրը պատեանները ծովին յատակը իջած են։ Այս մանր խեցեմորթ ձուկերէն բիւրաւորներ և բիւրաւորներ ծովուն մէջ ապրած և մեռած են. և անոնց պատեանները ձեան ամենամանր մասերուն պէս ծովին խորը տեղալով՝ այսպէս բոլորովին ծածկած են անոր յատակը, ուր տակաւին կը կենան. և զարմանալին ան է որ աս մանր պատեանները կոտրը-

տած չեն , այսինքն՝ 'ի բնէ շատ փափուկ և մանր ըլլալով տակաւին իրենց ձևին մէջ անբողջ մնացած են : Ասիկա կը ցուցնէ թէ ծովին այն խորութեանը մէջ ուր յիշեալ մանր մանր պատեանները կը կենան՝ ամենևին յորձանք չկայ , ոչ ալ ջուրերու յուզում կամ ծփանք որով պատեաններն իրարու զարնուելով մանրին կամ փշրին : Ասոնց գիւտն ընողներն անոնք են որ Ադլանտեան Հեռագրին պարանը դնելու ատեն պատեհութիւն ունեցան Ովկիանոսին յատակը քննելու : Հատ անգամ յիշեալ կաւանման կակուղ նիւթէն բաւական քանակութիւն մը վեր առնուած է այն գործիքով որով Ովկիանոսին յատակը կը զննուէր , և այս առթիւ այն նիւթը քննուելով մանր խեցեմորթ պատեաններէ բաղադրեալ ըլլալն իմացուեցաւ : Իմա երկու հեռագրական պարանները յիշեալ անհամար խեցիներէ բաղկացեալ նիւթին մէջ զետեղուած են . և որովհետև , ինչպէս ըսինք , ցուցուած է որ այն խեցիները ծովուն ան խորութեանը մէջ դարերէ 'ի վեր կը կենան անխռով և անշարժ մրրիկներէ՝ որք ծովուն վերի մասը կամ երեսը կը յուզեն , շատ հաւանական է թէ հին և նոր աշխարհաց մէջ ըուր առնող և տուող այս երկու պարաններն ալ նոյն խորութեան մէջ դարերով անվնաս պիտի մնան : Նոյն քննութիւնները ցուցուցին նաև որ Ովկիանոսին գէթ այն մասին մէջ ուր Հեռագրական պարանը պիտի դրուէր՝ ծովին յատակը ան

հաւասար կամ խորտուբորտ չէ. ծովեզերքէն մին-
չև Ովկիանոսին ամենէն խորունկ յատակը՝ էջն աս-
տիճան աստիճան է, տեսնուած է նաև որ տեղ տեղ
բաւական միջոցներ բոլորովին հարթ են:

Աս պարագան պարանին դրուիլը դիւրին ըրաւ,
ապա թէ ոչ շատ դժուարութիւն պիտի կրուէր,
այնպէս որ կարծես թէ Ուախախնամութիւնը յատ-
կապէս աս գործին համար պատրաստած էր Ովկի-
անոսին յատակը:

A.

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՃԻՇԻՂ
18	22	փոսխս	փոսխս
27	7	ատն էր	ան տէր
35	11	քաջոութիւններ	քաջութիւններ
36	7	սգի	ոգի
37	19	ժամտնակ	ժամանակ
39	13	Հեզեղ	Հեղեղ
40	1	բաղդերնիս	բաղդերնիս
44	8	Ը.ոտուծոյ	Ը.ստուծոյ
44	21	մեղ	մեղ
49	3	Ներկիրս	Երկիրս
52	22	Թողի	դողի
61	6	կատրեցիք	կատարեցիք
71	1	անսղորմ	անողորմ
85	24	ցմեռուան	ձմեռուան
92	2	ասանջացը	ականջացը
92	3	իը	կը

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi
ERM0988
255.07.02.01.06.00/